# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 դեկտեմբերի 2023թ. թիվ 840-Ա

«ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԿԱՅՈՒՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՔԱՐՏԵԶ 2027»
ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով և հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 2022 թվականի հունիսի 16-ի թիվ 363-Ա որոշմամբ ստեղծված համնաժողովի գործունեության արդյունքում ստացված նյութերը՝

Ո ր ո շ ու մ  եմ.

1. Հաստատել Լոռու մարզի կայուն զբոսաշրջության զարգացման ճանապարհային քարտեզը՝ համաձայն հավելվածի:

2. ՀՀ Լոռու մարզի համայնքների ղեկավարներին՝

Առաջարկում եմ այսուհետ առաջնորդվել Լոռու մարզի կայուն զբոսաշրջության զարգացման ճանապարհային քարտեզով:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

21/12/2023

X

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2023թ. դեկտեմբերի 21
ք.Վանաձոր

Հավելված.
ՀՀ Լոռու մարզպետի
2023թ. դեկտեմբերի 21-ի
թիվ 840-Ա որոշման

# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԿԱՅՈՒՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՔԱՐՏԵԶ 2027

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA
EU4Business

Գերմանական համագործակցություն
DEUTSCHE ZUSAMMENARBEIT

Implemented by: giz Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH

LORI

Հեղինակներ՝ Մաթթիաս Բեյեր, Մարգարիտ Բաբուրյան
Խմբագիր՝ Արմեն Հակոբյան
Պատրաստվել է՝ 2023թ.
Հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, ք.Վանաձոր, 2001, Հայքի հրապարակ: Լոռու մարզպետի աշխատակազմ
Հեռ.՝ (+ 374 322) 4-32-99, (+ 374 322) 2-31-99

Սույն փաստաթուղթը պատրաստվել է Եվրոպական միության (ԵՄ) և Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության (ԳԴՀ ՏՀԶՆ) աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում Լոռու մարզպետի աշխատակազմը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի ԵՄ-ի և ԳԴՀ ՏՀԶՆ-ի տեսակետները:



Գիտակցելով զբոսաշրջության առանցքային դերը կայուն զարգացման գործում՝ մենք ձեռնամուխ ենք եղել մշակելու համապարփակ ճանապարհային քարտեզ, որն ուրվագծում է զբոսաշրջության ոլորտի զարգացմանն ուղղված գործնական քայլերը: Այս ճանապարհային քարտեզը տարբեր շահագրգիռ կողմերի՝ ներառյալ պետական և մասնավոր կառույցների, տեղական համայնքների և փորձագետների լայնածավալ համագործակցության համատեղ արդյունք է: Այն արտահայտում է մարզում զբոսաշրջության զարգացման ամբողջական մոտեցումը, ներառյալ զբոսաշրջային նպատակակետի կառավարման, առաջխաղացման, մարդկային ռեսուրսների զարգացման, ուսումնասիրությունների իրականացման և վիճակագրության վարման, գրավիչ առաջարկի ստեղծման ու կատարելագործման, տուրիստական ենթակառուցվածքների զարգացման, ինչպես նաև որակյալ ծառայությունների ապահովման գործողությունների ուղեցույցը մինչև 2027թ.:

Շնորհակալություն եմ հայտնում Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության կողմից իրականացվող ԵՄ-ն բիզնեսի համար նախաձեռնության «Նորարարական տուրիզմի և տեխնոլոգիաների զարգացում Հայաստանի համար» ծրագրի փորձագետներին՝ ճանապարհային քարտեզի մշակման ընթացքում իրենց աջակցությունն ու փորձը ներդնելու համար: Զբոսաշրջության զարգացման ճանապարհային քարտեզը ծառայելու է որպես ուղեցույց մեր ընդհանուր ճանապարհորդության համար՝ դեպի կենսունակ և կայուն զբոսաշրջության ապագա:

Ձերմ բարեմաղթանքներով՝
Լոռու Մարզպետ՝ Արամ Խաչատրյան



Լոռու մարզում տնտեսության զարգացման առաջնային խնդիրներից է զբոսաշրջության ոլորտի զարգացումը, որն ամրագրվեց Լոռու մարզի 2017-2025թթ. զարգացման ռազմավարության մեջ: Արագ տեմպերով ավելանում են հյուրանոցային տնտեսությունների, զբոսաշրջային և այլ ծառայությունների քանակը, մեծանում է մարզի նկատմամբ հետաքրքրությունը՝ որպես զբոսաշրջային նոր ուղղություն:

Թերևս սրանք էին հիմնական պատճառները, որոնք հիմք դարձան զբոսաշրջության զարգացման ճանապարհային քարտեզի մշակման աշխատանքների նախաձեռնությանը: Մարզպետի կողմից ստեղծվեց աշխատանքները համակարգող հանձնաժողով՝ մարզպետի տեղակալի գլխավորությամբ, ներգրավվեցին պետական, համայնքային կառույցների, շահագրգիռ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, ոլորտում ակտիվ անհատներ, որոնք միավորվեցին նախաձեռնության աշխատանքներում: Մեր աշխատանքային թիմին միացավ Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության կողմից իրականացվող ԵՄ-ն բիզնեսի համար նախաձեռնության «Նորարարական տուրիզմի և տեխնոլոգիաների զարգացում Հայաստանի համար» ծրագրի թիմը:

Շնորհակալություն եմ հայտնում մեր թիմին և իհարկե մեր փորձագետներին, բոլոր այն մարդկանց, ովքեր մասնակցեցին այս կարևորագույն աշխատանքը իրականացնելուն:

Հասմիկ Մկրտչյան
ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ




Հավատարիմ լինելով Հայաստանի հյուսիսային մարզերում կայուն զբոսաշրջության զարգացման մեր առաքելությանը՝ Գերմանական Միջազգային համագործակցության ընկերության կողմից իրականացվող ԵՄ-ն բիզնեսի համար նախաձեռնության «Նորարարական տուրիզմի և տեխնոլոգիաների զարգացում Հայաստանի համար» ծրագիրը աջակցել է Լոռու զբոսաշրջության զարգացման ճանապարհային քարտեզի մշակմանը: Այս փաստաթղթի մշակման համար մենք ներդրել ենք միջազգային և տեղացի փորձագետների, ինչպես նաև ծրագրի թիմի անդամների երկարամյա փորձը և ոլորտային գիտելիքները:

Պետական և մասնավոր հատվածի հետ միասին մենք քննարկել ենք Լոռու մարզի զբոսաշրջության հետագա զարգացման վերաբերյալ գաղափարներ: Մեր համագործակցությունը Լոռու մարզպետի աշխատակազմի, համայնքների ներկայացուցիչների, մասնավոր ձեռնարկությունների, Լոռու տարածաշրջանի զբոսաշրջության կառավարման գրասենյակի և այլ համապատասխան շահագրգիռ կողմերի հետ ապացուցում է մշակման գործընթացում ներառական և մասնակցային մոտեցումը:

Այս փաստաթուղթը մեր հավաքական ջանքերի արդյունքն է և կծառայի որպես համապարփակ ուղեցույց՝ Լոռիում կայուն զբոսաշրջության զարգացման պլանավորման գործում, մինչև 2027թ.:

Վիլհելմ Հուգո
Գերմանական Միջազգային համագործակցության ընկերության կողմից իրականացվող ԵՄ-ն բիզնեսի համար նախաձեռնության «Նորարարական տուրիզմի և տեխնոլոգիաների զարգացումը Հայաստանի համար» ծրագրի ղեկավար



Ցանկանալով ընդգծել Լոռիում զբոսաշրջության զարգացման ճանապարհային քարտեզի ստեղծման կարևորությունը՝ Լոռու տարածաշրջանի զբոսաշրջության կառավարման գրասենյակ ՀԿ-ն իր անդամների և գործընկերների անունից պատրաստակամությունն է հայտնում աջակցել փաստաթղթում տեղ գտած գործողությունների իրականացմանը:

Միասին մենք կարող ենք հասնել շոշափելի արդյունքների, որոնք օգտակար կլինեն ոչ միայն մեր մարզին, այլև մարզում տարբեր փորձառություններ փնտրող այցելուներին: Միավորենք ջանքերը, օգտագործենք մեր փորձը և միասին աշխատենք կյանքի կոչելու ճանապարհային քարտեզը՝ ամրապնդելով Լոռու դիրքը որպես գրավիչ և ցանկալի զբոսաշրջային նպատակակետ:

Ջերմորեն՝
Լոռու տարածաշրջանի զբոսաշրջության կառավարման գրասենյակ ՀԿ-ի տնօրեն՝ Քրիստինե Հովսեփյան

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.ՆԱԽԱԲԱՆ 6
Ճանապարհային քարտեզի մշակման մեթոդաբանությունը 6
2. ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 7
Շահագրգիռ կողմերի ուսումնասիրություն 7
Զբոսաշրջության առաջարկը 8
Զբոսաշրջության պահանջարկը 10
Զբոսաշրջության ոլորտում զբաղվածության նկարագիրը 12
Զբոսաշրջության տնտեսական ազդեցությունը 13
Ռիսկերի վերլուծություն 13
SWOT վերլուծություն 14
3.ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ ԿԱՅՈՒՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԼԱԿԱՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 18
4.ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ ԿԱՅՈՒՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ21
Զբոսաշրջության ոլորտի ուսումնասիրություն ու վիճակագրություն 21
Նպատակակետի մարքեթինգը և բրենդավորումը 22
Զբոսաշրջության արդյունքի մշակում 25
Զբոսաշրջային ուղղության կառավարումը 26
Զբոսաշրջության ոլորտում մարդկային ռեսուրսների և կարողությունների զարգացումը 27
Զբոսաշրջային ենթակառուցվածք և տրանսպորտ 27
Զբոսաշրջության ոլորտում որակի և կայունության կառավարում 28
Զբոսաշրջության այլ շրջանակներ 29
5.ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ ԿԱՅՈՒՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ 30
Կարճաժամկետ գործողությունների կարիք՝ 2024-2025 30
Կարճաժամկետ գործողությունների և մոնիթորինգի պլան 32
Միջնաժամկետ գործողությունների կարիք՝ 2025-2027 37
Միջնաժամկետ գործողությունների և մոնիթորինգի պլան 39
Երկարաժամկետ գործողությունների կարիք՝ 2027 կամ ավելի ուշ 44
Երկարաժամկետ գործողությունների և մոնիթորինգի պլան 45

## 1. ՆԱԽԱԲԱՆ

Մինչև 2020թ. միջազգային զբոսաշրջությունը աշխարհի տնտեսության ամենաարագ և դինամիկ զարգացող ճյուղերից մեկն էր: 2019 թ. զբոսաշրջության ոլորտը ապահովել էր բոլոր աշխատատեղերի 10.3%-ը (334 մլն.) և համաշխարհային ՀՆԱ-ի 10.4%-ը (10 տրլն. ԱՄՆ դոլար):1

Զբոսաշրջությունը հանդիսանում է եկամտի ապահովման, աշխատատեղերի ստեղծման, ենթակառուցվածքների զարգացման, մշակութային փոխանակումների խթանման և շրջակա միջավայրի պահպանման կարևոր գործիք աշխարհի բազմաթիվ երկրների համար՝ ներառյալ զարգացած և զարգացող երկրները, և Հայաստանը բացառություն չէ:

2020թ. COVID-19 համաճարակից հետո միջազգային զբոսաշրջությունը շարունակում է վերականգնման զգալի նշաններ ցույց տալ: 2022թ. զբոսաշրջության ոլորտի մասնաբաժինը համաշխարհային ՀՆԱ-ում կազմել է 7.6%, ինչը ցածր է 2019թ. մակարդակից ընդամենը 2,3%-ով2: Մինչև 2020թ. COVID-19 համաշխարհային ճգնաժամը՝ Հայաստանը տարեցտարի զբոսաշրջային այցելությունների աճ էր գրանցում: 2019թ. Հայաստան այցելած միջազգային զբոսաշրջիկների թիվը կազմել էր մոտ 1.9 մլն.՝ նախորդ տարվա համեմատ աճելով 14.7%: Համաշխարհային ճանապարհորդության և զբոսաշրջության խորհրդի 2020թ. տարեկան զեկույցի համաձայն՝ Հայաստանի 2019թ. զբոսաշրջության ոլորտի ներդրումը երկրի ՀՆԱ-ում կազմել է 12.6% (923.4 մլրդ. դրամ) և ապահովել 13.8% (137.6 հազ.) զբաղվածություն3: 2019թ. միջազգային զբոսաշրջիկները Հայաստանում ծախսել են մոտ 1.5 մլրդ. դոլար4՝ կազմելով երկրի արտահանման եկամուտների ավելի քան 25%: Ըստ ՀՀ Էկոնոմիկայի նախարարության Զբոսաշրջության կոմիտեի 2023թ. հունվարից հոկտեմբեր ընկած ժամանակահատվածում Հայաստանն ունեցել է 2 միլիոն 50 հազար զբոսաշրջային այցելություն, ինչը արդեն գերազանցում է Հայաստանի մինչ COVID ցուցանիշը:

Հայաստանի Լոռու մարզը վերջին տարիներին դարձել է զբոսաշրջիկների համար հետաքրքիր ուղղություն: Հաշվի առնելով, որ ՀՀ Լոռու մարզի 2017-2025թթ. զարգացման ռազմավարության5 մեջ զբոսաշրջությունը նշված է որպես տնտեսության գերակա ոլորտ՝ մարզպետի աշխատակազմը ի դեմս «Զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի», նախաձեռնել է զբոսաշրջության զարգացման միջնաժամկետ ճանապարհային քարտեզի մշակումը:

### Ճանապարհային քարտեզի մշակման մեթոդաբանությունը

Լոռու մարզի զբոսաշրջության կայուն զարգացման ճանապարհային քարտեզը մշակվել է Գերմանիայի Միջազգային համագործակցության ընկերության (GIZ) կողմից իրականացվող ԵՄ-ն բիզնեսի համար նախաձեռնության «Նորարարական տուրիզմի և տեխնոլոգիաների զարգացումը Հայաստանի համար» ծրագրի աջակցությամբ: Այն իրականացվել է կայուն զբոսաշրջային ուղղությունների կառավարման միջազգային և տեղական փորձագետների ներգրավմամբ: Փաստաթղթի մշակման հիմքում ընկած է Լոռու մարզի զբոսաշրջության ոլորտի շահագրգիռ կողմերի (պետական և մասնավոր) ներգրավումը, մասնակցային քննարկումները, իրավիճակային փորձագիտական վերլուծությունը, կարիքների գնահատումը, ինչպես նաև մարզային առանձնահատկությունների վերհանումը և զարգացման ուղղությունների սահմանումը:

Ճանապարհային քարտեզի մշակման ընթացքում ուսումնասիրվել են մարզում զբոսաշրջության ոլորտի շահառուների մոտեցումները, կարծիքները, բացահայտվել են մի շարք առանձնահատկություններ, որոնք ներկայացված են աշխատանքային փաստաթղթում: Այս քննարկումներին մասնակցել են Լոռու մարզի պետական և մասնավոր հատվածի ներկայացուցիչներ,

---

[1] Travel and Tourism Economic Impact 2021, World Travel and Tourism Council (WTTC), 2021 Global Economic Impact and Trends 2021.pdf (wttc.org) վերջին մուտքը՝ 04.12.2023թ.

[2] Economic Impact Research, World Travel and Tourism Council (WTTC) Travel & Tourism Economic Impact | World Travel & Tourism Council (WTTC) վերջին մուտքը՝ 04.12.2023թ.

[3] ARMENIA 2022 Annual Research: Key Highlights, World Travel and Tourism Council (WTTC), 2022 Armenia2022_.xls (wttc.org) վերջին մուտքը՝ 04.12.2023թ.

[4] World Tourism Barometer Statistical Annex, Volume 19, Issue 3, May 2021 UNWTO World Tourism Barometer - Statistical annex, May 2021

[5] Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի 2017-2025 թվականների ռազմավարություն Microsoft Word - 2017-2025razmavarutyun (mtad.am) վերջին մուտքը՝ 04.12.2023թ.

Լոռու տարածաշրջանի զբոսաշրջության կառավարման գրասենյակի ներկայացուցիչների և անդամներ, միջազգային և տեղացի փորձագետներ, ինչպես նաև քաղհասարակական կառույցներ և ոլորտի այլ շահառուներ:

Ճանապարհային քարտեզը ներառում է Լոռու մարզի զբոսաշրջության ոլորտի ներկա իրավիճակի համառոտ վերլուծությունը, որին հաջորդում են զբոսաշրջության զարգացման տեսլականը, իրականացման սկզբունքները և նպատակները: Դրանից ելնելով՝ հստակեցվել են Լոռու մարզում զբոսաշրջության զարգացման ռազմավարական ուղղությունները և գործողությունների ծրագիրը: Վերջինս նկարագրում է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ անհրաժեշտ գործողությունները, դրանց պատասխանատուներին և իրականացման ժամկետները, ինչպես նաև արդյունավետության գնահատման և մոնիթորինգի չափորոշիչները:

## ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

### Շահագրգիռ կողմերի ուսումնասիրություն

Լոռու մարզի կայուն զբոսաշրջության ռազմավարական ուղղություններն ու գործողությունները հստակ ձևակերպելու նպատակով իրականացվել է ոլորտի շահագրգիռ կողմերի ուսումնասիրություն: Արդյունքում բացահայտվել և գնահատվել են զբոսաշրջության տարբեր դերակատարների նշանակությունը, շահերը և փոխազդեցությունները:




Լոռու մարզպետի աշխատակազմը առանցքային դեր ունի մարզի զբոսաշրջության ոլորտը իր իրավասության շրջանակներում ղեկավարելու և կարգավորելու գործում: Մասնավորապես, այն պատասխանատու է.

- Մարզում զբոսաշրջության զարգացման քաղաքականության մշակման և իրականացման համար
- Հիմնական զբոսաշրջային ենթակառուցվածքների կառավարման և վերահսկողության համար

- Մշակութային և բնական ժառանգության պահպանման համար
- Համայնքների հետ համագործակցության համար

Լոռու տարածաշրջանի զբոսաշրջության կառավարման գրասենյակ ՀԿ-ն պատասխանատու է Լոռին որպես զբոսաշրջային նպատակակետ խթանելու, ինչպես նաև ոլորտում շահագրգիռ կողմերի համագործակցության ապահովման համար:

Հարկ է նշել, որ Լոռին թիրախային մարզ է Հայաստանում գործող բազմաթիվ միջազգային դոնոր կազմակերպությունների համար, որոնք տարբեր նախաձեռնությունների շրջանակում իրականացնում են ոլորտի զարգացման, կայունության ապահովման, մասնագետների վերապատրաստման, ինչպես նաև ձեռնարկատիրության աջակցման ուղղված և այլ ծրագրեր:

**Զբոսաշրջային առաջարկը**

Լոռու զբոսաշրջային արդյունքը ներկայացված է բնության հրաշքների, մշակութային գանձերի և տպավորիչ արկածների գրավիչ համադրությամբ՝ ապահովելով փորձառությունների բազմազանություն և ստեղծելով մնայուն հիշողություններ բնության, մշակույթի սիրահարների, ինչպես նաև արկածներ փնտրողների համար:




Լոռու տուրիզմի զարգացման և հետազոտության կենտրոնի (ՄԱԶԾ) կողմից 2019-2020թթ. իրականացված հետազոտության6 հիման վրա Լոռու մարզում տուրօպերատորների առաջարկներում ներառված հիմնական տեսարժան վայրերն են եղել Հաղպատը, Սանահինը, Ստեփանավանի դենդրոպարկը, Դսեղը, Օձունը, Լոռի Բերդը և Քոբայրը: Այս վայրերը ամենահայտնին են նաև ներքին զբոսաշրջիկների շրջանում: Սրանք ընդգծում են Լոռու՝ որպես պատմամշակութային ուղղության հզոր համբավը:

Մարզում տարբեր ժամանակաշրջաններում գործարկվել է այցելուների տեղեկատվական չորս կենտրոն, սակայն հիմա գործում է միայն COAF Smart Visitor Center-ը, որը գտնվում է Վանաձորը Վրաստանին կապող M6 մայրուղու վրա: Այն իր տեսակի մեջ առաջինն է Լոռիում: Կենտրոնը զբոսաշրջության ոլորտի վերաբերյալ տեղեկատվություն է տրամադրում այցելուներին Լոռու մարզի զբոսաշրջային հնարավոր բոլոր ոլորտների մասին՝ հյուրանոցների, հյուրատների, պատմամշակութային վայրերի, ռեստորանների, սրճարանների և այլն շաբաթական յոթ օր, օրական 10 ժամ, ամբողջ տարվա ընթացքում: Այն ծառայում է նաև որպես վերալիցքավորման հանգույց,

---

[6] Լոռու մարզում զբոսաշրջության զարգացման հնարավորությունների հետազոտություն, Լոռու տուրիզմի զարգացման և հետազոտության կենտրոն, http://lori.mtad.am/files/docs/48550.pdf

տրամադրելով թե հեռախոսների և էլեկտրամիբիլների լիցքավորման, այնպես էլ թարմանալու, սրճելու, բանկոմատից կամ վճարային տերմինալներից օգտվելու հնարավորություն:

ԵՄ կողմից ֆինանսավորված «Քո կայանը» Լոռու մարզում ճանապարհային կայան է (RSS – Road Side-Station), որը նախատեսված է աջակցելու տեղական փոքր և միջին ձեռնարկություններին տեղական արտադրանքի վաճառքի և տեղական զբոսաշրջության խթանման գործում: Թեև այն ֆունկցիոնալ է, սակայն որպես ակտիվ տեղեկատվական կենտրոն չի գործում:

Մյուս երկու կենտրոնները՝ ՄԱԶԾ Լոռու այցելուների տեղեկատվական կենտրոնը և «Թումանյան աշխարհը» գործարկվել են ՄԱԶԾ-ի և Ֆրանսիայի Հարավային Երկրամաս Պրովանս-Ալպեր Կոտ Դ՝Ազյուր շրջանի աջակցությամբ իրականացվող ծրագրերի շրջանակներում: Սակայն այս ծրագրերի ավարտից հետո դրանք դադարեցրել են իրենց գործունեությունը:

## ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԳՈՒՅՔԱՑՈՒՑԱԿ




Լոռու մարզում հյուրանոցային տնտեսության օբյեկտների բաշխվածությունը անհամաչափ է: Մարզի որոշ հատվածներում առկա է կացարանների որոշակի ընտրանի՝ ներառյալ հյուրանոցներ, հյուրատներ և առողջարաններ: Այնուամենայնիվ մարզի այլ մասերում կացարանների ընտրությունը ավելի սահմանափակ է: Դրանց բաշխվածությունը համահունչ է Լոռիում զբոսաշրջային վայրերի և հայտնի ուղղությունների կենտրոնացմանը: Այսպիսով, Վանաձորը, Ստեփանավանը, Ալավերդին, Դսեղը, Դեբետը, Թումանյանը և Օձունը, որոնք համեմատաբար ավելի հայտնի զբոսաշրջային վայրեր են, ունեն գիշերակացի ավելի լայն հնարավորություններ: Այստեղ առկա են հյուրանոցներ, հանգստյան տներ, հյուրատներ, գլեմփինգ կացարաններ: Մյուս կողմից, որոշ տարածքներ, ինչպիսիք են Տաշիրը և Սպիտակը, ունեն կացարանների սահմանափակ ընտրություն:

Լոռու Մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի կողմից թվարկված են 270 հյուրանոցային տնտեսության օբյեկտ, այդ թվում՝ հյուրանոցներ, հյուրատներ, առողջարաններ, ինչպես նաև արշավների և գլեմփինգի վայրեր, վարձակալությամբ հանձնվող առանձնատներ: Տարեցտարի ավելանում է կացարանների թիվը, ինչը նշանակում է, որ մարզում դրա պահանջարկը կա: Դրանց մեծամասնությունը գտնվում է Ստեփանավան, Վանաձոր, Դսեղ, Ալավերդի, Օձուն, Հաղպատ, Գյուլագարակ, Գարգառ, Դեբետ բնակավայրերում:

Լոռու մարզպետի աշխատակազմի Զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի տվյալներով տարածաշրջանում գործող կացարանները կարող են միաժամանակ ապահովել 3500-4000 ննջատեղ: Դրանց շուրջ 70%-ը գործում է ամբողջ տարվա ընթացքում, իսկ մնացած 30%-ը՝ մայիսից հոկտեմբեր ընկած ժամանակահատվածում: Այս տնտեսությունների մեծ մասը կոչվում է

հյուրատուն, օթևանատուն կամ զբոսաշրջային տուն՝ ըստ սեփականատերերի նախընտրության: Լոռու մարզի տարբեր համայնքներում գտնվող ընտանեկան սեփականություն լինելով՝ դրանք գիշերակացի հարմար պայմաններ են առաջարկում այցելուներին: Որոշ սեփականատերեր բախվում են լեզվական խոչընդոտների՝ միջազգային հյուրերի հետ շփվելիս, և երբեմն նրանց վերաբերմունքն ու հյուրընկալությունը կարող է ոչ պատշաճ ընկալվել: Կան նաև զգալի թվով տներ, հատկապես քիչ զարգացած զբոսաշրջային վայրերում, որտեղ պահպանում են իսկական գյուղական մշակույթը, կահույքը, հնաոճ կենցաղային իրերը և այլն: Այս տները մեծ ներուժ ունեն ծառայելու որպես գիշերակացի վայր նրանց համար, ովքեր հետաքրքրված են իրական գյուղական փորձառություններով և կենցաղով:

Հարկ է նշել, որ հարմարավետություն և բարձրակարգ սպասարկում պահանջող մեծ խմբերի համար կան որոշակի դժվարություններ, քանի որ մարզում գործում է միայն մեկ ցանցային հյուրանոց՝ Ձորագետում (Թուֆենկյան Ավան Ձորագետ): Մեծ խմբեր տեղաբաշխումը կազմակերպելիս՝ շատերը առընչվում են խնդիրների հետ, քանի որ մարզում շատ քիչ են մեծ կամ միջին չափերի միմյանցից ոչ հեռու գտնվող հյուրանոցները: Եթե հյուրանոցն ամբողջությամբ ամրագրված է, ապա նմանատիպ չափանիշներով այլընտրանք գտնելը բավականին դժվարանում է: Արդյունքում, մեծ խմբերի համար դասական շրջագայությունների ժամանակ Լոռին հաճախ չի դիտվում որպես գիշերելու վայր, և գիշերակացը հիմնականում կազմակերպվում է Դիլիջանում կամ շրջակայքում: Վերջին տարիներին Լոռին լայն տարածում է գտել նաև որպես գլեմփինգի ուղղություն՝ առաջին հերթին Գուգարքի և Թումանյանի տարածաշրջաններում:

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ




270 հյուրանոցային տնտեսություն 3500-4000 ննջատեղ

**Զբոսաշրջության պահանջարկը**

Լոռու մարզում զբոսաշրջության պահանջարկը ուսումնասիրելու համար տարբերակվել են ներքին (Հայաստանում բնակվող), տարածաշրջանային (հարևան և ԱՊՀ երկրներում բնակվող) ու միջազգային այցելուներ (այլ երկրներում ապրող): Բացի այցելուների ծագման երկրից և քանակից, դիտարկվել են նաև նրանց ճանապարհորդության ընդհանուր բնութագրերը ու վարքագիծը՝ շուկան և այցելուների սեգմենտները ավելի լավ հասկանալու համար: Քանի որ Լոռու մարզում

զբոսաշրջության պահանջարկի վերաբերյալ առայժմ բավարար տվյալների բազա չկա, օգտագործվել են ազգային մակարդակով փաստեր և թվեր, որոնք, ըստ էության, վավերական են նաև Լոռու մարզի համար:

2022թ. Հայաստան է այցելել մոտ 1.67 մլն. զբոսաշրջիկ, ինչն արտացոլում է զգալի՝ 92% աճը՝ 2021թ. 870 հազ. այցելուների համեմատ: Իգական սեռի ներկայացուցիչները 2022թ. կազմում են այցելուների 45%-ը, իսկ արական սեռի այցելուները՝ 55%-ը: Հայաստանի այցելուների 70%-ը 26-ից 63 տարեկան են, այցի միջին տևողությունը կազմում է 31 օր: Այցելուների մոտ 70%-ը 6 երկրից են, այդ թվում Ռուսաստանի Դաշնություն, Վրաստան, Իրան, ԱՄՆ, Գերմանիա և Ֆրանսիա: Ռուսաստանի Դաշնությունը Հայաստանի ամենակարևոր թիրախային շուկան է, որին բաժին է ընկնում օտարերկրյա զբոսաշրջիկների գրեթե կեսը (47,5% 2022 և  45% 2019թ.): Դա հիմնականում պայմանավորված է Հայաստանի հետ պատմամշակութային և տնտեսական ամուր կապերով, ինչպես նաև լավ կայացած օդային հաղորդակցությամբ: Չնայած Վրաստանը երկրորդ տեղում է ժամանած զբոսաշրջիկների առումով, կարևոր է տարբերակել այցելուների տարբեր տեսակները, այդ թվում՝ հայկական սփյուռքի ներկայացուցիչները, ովքեր գալիս են Հայաստան ընկերներին և հարազատներին այցելելու, պրոֆեսիոնալ վարորդները և Ջավախքից ժամանած ուսանողները:

2023թ. հունվարից հոկտեմբեր ընկած ժամանակահատվածում Հայաստան այցելել է 2 միլիոն 50 հազար զբոսաշրջիկ, ինչն արդեն գերազանցում է Հայաստանի մինչ COVID-ը եղած ցուցանիշը:

ՄԱԿԶԾ և ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալներով Հայաստանում ներքին զբոսաշրջությունը մինչև COVID-19 համաճարակը նույնպես աճում էր՝ 2019թ. հասնելով 1.54 մլն.: Համաճարակի հետևանքով Հայաստանի ներքին զբոսաշրջության զգալի ակտիվացում գրանցվել: 2022թ. այն հաղթահարել է նախահամաճարակային մակարդակը և հասել 1.69 մլն. (1.43 մլն. 2021թ.):

2019թ. Լոռու տուրիզմի զարգացման և հետազոտության կենտրոնը (ՄԱԶԾ) հետազոտություն է իրականացրել՝ պարզելու, թե որքան զբոսաշրջիկ է գիշերակացով այցելել Լոռու մարզ և որ երկրներից: Հետազոտության արդյունքում պարզվել է, որ Լոռի այցելած զբոսաշրջիկները հիմնականում Ֆրանսիայից, Գերմանիայից, Ռուսաստանից, Նիդերլանդներից, Իսպանիայից, Իտալիայից և ԱՄՆ-ից էին: Նշված հետազոտության համաձայն՝ 2019թ. մարտից օգոստոս ընկած ժամանակահատվածում Լոռի այցելած զբոսաշրջիկների թիվը գնահատվում է մոտ 60 հազ.[7], սակայն սա ներառում է միայն 38 հյուրանոցային տնտեսության օբյեկտների տրամադրած տվյալները: Իրականում  կարելի է դիտարկել, որ զբոսաշրջիկների թիվն ավելի շատ է եղել:

2023թ. հունիսի 30-ին Լոռու տարածաշրջանի զբոսաշրջության կառավարման գրասենյակ ՀԿ կողմից կազմակերպված 3-րդ «Tourism Talks» միջոցառման ընթացքում, շահառուների կողմից ստացված արձագանքների հիման վրա Լոռու մարզ այցելած ներքին և ներգնա զբոսաշրջիկների հարաբերակցությունը կազմում համապատասխանաբար՝ 70% և 30%: Ներգնա զբոսաշրջիկների մեծ մասը կազմում են միջազգային զբոսաշրջային փաթեթներով ճանապարհորդողները, ովքեր այցելում են պատմամշակութային տեսարժան վայրեր, որոշ տոկոս (5-10%) կազմում են օտարերկրյա անհատ ճանապարհորդները: Ծագման հիմնական երկրներն են Ռուսաստանի Դաշնությունը (ներառյալ վերաբնակեցվածները), ԱՄՆ-ը (հիմնականում Սփյուռքը) և ԵՄ երկրները՝ Ֆրանսիան, Գերմանիան, Չեխիան և այլն: Քիչ թվով զբոսաշրջիկներ են նկատվել Վրաստանից և Իրանից:

Ներքին զբոսաշրջիկների խմբում ամառային արձակուրդներ անցկացնող ընտանիքները կազմում են մոտ 30%-ը, մինչդեռ Հաղպատ, Սանահին և Դսեղ այցելած դպրոցականներն ու ուսանողները՝ մոտ 50%-ը: Բացի այդ, փոքր տոկոսը (5%) բաղկացած է առողջարանային սպասարկման համար դիմող անհատներից, և մոտավորապես 15%-ը կորպորատիվ հաճախորդներ են Երևանից: Քաղծառայողների և նրանց ընտանիքի անդամների համար հասանելի «Սոցիալական փաթեթներից» օգտվողների մասնաբաժինը մնում է նվազագույն:

ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակած տվյալների համաձայն՝ Լոռիում գործում է 8 թանգարան, որոնք 2021թ. միասին գրանցել են 78,3 հազար այցելու: Իրավիճակային վերլուծության ընթացքում Լոռու տարածաշրջանի զբոսաշրջության կառավարման գրասենյակ ՀԿ-ի կողմից

[7] Լոռու մարզում զբոսաշրջության զարգացման հնարավորությունների հետազոտություն, Լոռու տուրիզմի զարգացման և հետազոտության կենտրոն,  http://lori.mtad.am/files/docs/48550.pdf

իրականացրած հարցումը ցույց է տվել, որ 2022թ. 50-ից ավել հետազոտված օբյեկտների այցելուների թիվը կազմել է ավելի քան 72 հազ.:

Շուկայական հետազոտությունների տվյալների բացակայության պատճառով Լոռու մարզ այցելուների նախնական սեգմենտավորում է կատարվել՝ օգտագործելով սեմինարների ու քննարկումների արդյունքները և տեղական զբոսաշրջության շահառուների փորձը: Սա հիմք է ծառայելու հետագա ռազմավարական միջոցառումների և գործառնական քայլերի համար:

| Սեգմենտ | Մասնաբաժինը շուկայում | Ծագման երկիրը | Կացարանի ընտրությունը | Բնութագիրը |
|---|---|---|---|---|
| Միջազգային զբոսաշրջային փաթեթներով ճամփորդողներ | Մեծ մասնաբաժին միջազգային զբոսաշրջիկների մեջ | Եվրոպա՝ Գերմանիա, Ֆրանսիա, Իտալիա | Միջին դաս | Փնտրում են հետաքրքիր ժամանց, մեծ նշանակություն են տալիս առօրյա կյանքից տարբերվող փորձառություններին: |
| Միջազգային անհատ ճամփորդողներ | Միջին մասնաբաժին միջազգային զբոսաշրջիկների մեջ | Եվրոպա, Իրան, ԱՄՆ, Արաբական թերակղզու երկրներ | Միջինից բարձր դաս<br>Միջին դաս<br>Էկոնոմ դաս | Փնտրում են բնությանը և մշակույթին առնչվող փորձառություններ, ունեն պատասխանատու ճամփորդական վարքագիծ: |
| Միջազգային ուսապարկով ճամփորդողներ (backpacker) | Ցածր մասնաբաժին միջազգային զբոսաշրջիկների մեջ | Եվրոպա՝ Գերմանիա, Լեհաստան, Չեխիա | Էկոնոմ դաս | Ունեն ժամանակակից մտածելակերպ և տեխնահենք ճամփորդական վարքագիծ, որոնում են տարբերակվող փորձառություններ և շփում համախոհների հետ: |
| Տարածաշրջանային փաթեթներով և անհատ ճամփորդողներ | Միջին մասնաբաժին բոլոր այցելուների և զբոսաշրջիկների մեջ | ԱՊՀ երկրներ՝ ՌԴ և Ղազախստան, Վրաստան, Իրան | Միջինից բարձր դաս<br>Միջին դաս<br>Էկոնոմ դաս | Հատուկ հետաքրքրություն և ճամփորդական վարքագիծ ունեցող (օրինակ՝ ուխտագնացություն), փնտրում են անհատական, հարմարեցված զբոսաշրջային արդյունք: |
| Ներքին կարճատև հանգիստ փնտրողներ | Մեծ՝ բոլոր այցելուների և զբոսաշրջիկների մեջ | Հայաստան | Միջին դաս<br>Էկոնոմ դաս | Ընտանիքներ երեխաներով, ընկերական խմբեր, հաճախ մեկօրյա այցելուներ, ունեն նպատակաուղղված մտածելակերպ և ճամփորդական վարքագիծ, ակնկալում են գրավիչ ժամանցի առաջարկներ՝ ըստ իրենց կարիքների և հետաքրքրությունների: |

### Զբոսաշրջության ոլորտում զբաղվածության նկարագիրը

Լոռու մարզում զբոսաշրջության զբաղվածության վերաբերյալ սահմանափակ տվյալները բավականին դժվարացնում են մարզում զբոսաշրջության ոլորտում զբաղվածության վերաբերյալ համապարփակ վերլուծություն իրականացնելը: Պաշտոնական վիճակագրության համաձայն՝ 2021թ. Լոռու մարզի հյուրանոցային տնտեսության օբյեկտների քանակը 31 է, իսկ աշխատավարձի հաշվարկման համար կիրառվող աշխատողների միջին ցուցակային (ամսական) թվաքանակը կազմել է 152 մարդ[8]: Այնուամենայնիվ, այս թվերը ճշգրիտ չեն արտացոլում հյուրանոցների և աշխատակիցների իրական քանակը:

[8] “ՀՀ Լոռու մարզը թվերով”, վիճակագրական ժողովածու, ՀՀ վիճագրական կոմիտե, 2022:

Հիմնվելով Լոռու տարածաշրջանի զբոսաշրջության կառավարման գրասենյակ ՀԿ-ի (DMO) կողմից իրավիճակային վերլուծության ժամանակ անցկացված հարցման արդյունքների վրա, հետազոտված 57 օբյեկտներում մշտական աշխատողների թիվը կազմում է 375, իսկ

Լոռու մարզի աշխատողների միջին ամսական անվանական աշխատավարձը 2021թ-ին, ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի, կազմել է 139.825 դր.9, ինչը 7.7% բարձր է 2020թ-ի համեմատ, սակայն 31%-ով ցածր է հանրապետության միջին 204.048 դր. աշխատավարձից:

**Զբոսաշրջության տնտեսական ազդեցությունը**

Լոռու մարզի զբոսաշրջության վերաբերյալ ՀՀ Վիճակագրական կոմիտեի տրամադրած տեղեկությունները ահմանափակ են, քանի որ դրանք գերազանցապես հիմնված են հյուրանոցային տնտեսությունների, զբոսաշրջային գործակալություններից և օպերատորներից ստացված տեղեկատվության վրա: Հետևաբար, այս վիճակագրությունը չի արտացոլում ընդհանուր իրական պատկերը: Ավելին՝ Լոռու մարզում բազմաթիվ տնտեսությունների ներկայացուցիչները հետևողական չեն ստույգ տեղեկատվություն հավաքելու և տրամադրելու գործում, ինչն ավելի է սահմանափակում առկա վիճակագրության հավաստիությունն ու ճշգրտությունը: Այսպիսով՝ ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակած տվյալների՝ Լոռու մարզում կացության և հանրային սննդի կազմակերպման ծառայությունների ծավալը 2022թ. կազմել է մոտ 2.8 մլրդ. դրամ (ՀՀ ծառայությունների ծավալի մոտ 1.1%-ը)10:

**Ռիսկերի վերլուծություն**

Լոռու մարզի զբոսաշրջության ոլորտի շահագրգիռ կողմերի հետ անցկացված սեմինարների և քննարկումների շրջանակներում իրականացվել է ռիսկերի գնահատում, որի արդյունքները ամփոփված են ստորև ներկայացված ռիսկերի քարտեզում և կարևոր պատկերացում են տալիս Լոռու մարզի զբոսաշրջության հետագա  զարգացման համար:

Ռիսկերի գնահատումը իրականացվել է դրանց ազդեցության և հավանականության հարթություններում: Առանձնացվել են ռիսկերի հավանականության և ազդեցության մի քանի մակարդակներ՝ շատ ցածր, ցածր, միջինից ցածր, միջին, բարձր և շատ բարձր:

Բարձր ազդեցություն և հավանականություն դաշտերում մասնակիցներն առանձնացրել են ոլորտի մասնագետների պակասը և դրանց արտագաղթը, փոխարժեքների անկայունությունը, դրանց հաճախակի տատանումները և ինֆլյացիան, հարկային քաղաքականության փոփոխությունները, փոքր բիզնեսների սահմանափակ ֆինանսական կարողություններն ու վճարելու պատրաստակամությունը, մարզում բնության հանդեպ անպատասխանատու վերաբերմունքն ու ջրամատակարարման խափանումները: Շատ բարձր ազդեցություն և նույնքան հավանականություն ունեցող ռիսկերի շարքում են հայտնվել պատերազմը և սահմանային հակամարտությունները, ինչպես նաև տնտեսության անկումն ու ճգնաժամը:

Միջին ազդեցություն և միջին հավանականություն ունեցող ռիսկերի շարքում առանձնացվել են հնարավոր բնական աղետները, քաղաքացիական պատերազմն ու հակամարտությունները, հանքարդյունաբերությունը, ՀԷԿ-երի կառուցումը, կարծրատիպերի առկայությունը՝ արտահայտված զբոսաշրջության ոլորտում ներգրավված կանանցով, տրանսպորտային հաղորդակցման վատթարացումը և արկածային զբոսաշրջության ստանդարտների անհամապատասխանությունը:

Ցածր հավանականություն և ազդեցություն ունեցող ռիսկերի շարքում մասնակիցները նշել են բիզնեսի կողմից հաճախ ներկայացվող սեռատարիքային պահանջները (փորձ, լեզուների իմացություն, երիտասարդ իգական սեռ), ինչպես նաև համաճարակը և ճանապարհների վատթարացումը:

[9] "Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով 2017-2021", ՀՀ վիճագրական կոմիտե, 2022:

[10] ՀՀ Լոռու մարզը թվերով 2018 – 2022 Վիճակագրական ժողովածու, ՀՀ վիճակագրական կոմիտե, Երևան 2023թ. https://armstat.am/file/doc/99542163.pdf

Շատ ցածր ազդեցություն և հավանականություն ունեցող ռիսկեր մասնակիցների կողմից չեն առանձնացվել:

Ռիսկերի վերհանման քարտեզում տեղ գտած կետերը քննարկվել և հասցեագրվել են նաև SWOT վերլուծության ու գործողությունների և մոնիթորինգի պլանում:




**SWOT վերլուծություն**

Ելնելով Լոռու մարզում զբոսաշրջության իրավիճակին վերաբերող նախորդ գլուխներից՝ այս գլխում ամփոփված են բոլոր հիմնական բացահայտումները SWOT վերլուծության տեսքով: SWOT վերլուծությունը նպատակակետի ուժեղ, թույլ կողմերը, հնարավորություններն ու սպառնալիքները բացահայտելու և վերլուծելու շրջանակ է: Վերլուծության առաջնային նպատակն է բարձրացնել Լոռու մարզի զբոսաշրջության զարգացման համար որոշումներ կայացնելու գործոնների մասին իրազեկվածությունը:

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս Լոռու մարզում զբոսաշրջության հիմնական ուժեղ, թույլ կողմերը, հնարավորություններն ու սպառնալիքները՝ հիմնված շահագրգիռ կողմերի հետ անցկացված քննարկումների, ինչպես նաև ներգրավված արտաքին փորձագետների գնահատման վրա:

Որպես ուժեղ և թույլ կողմեր դիտարկվել են այն կարևոր ներքին գործոնները և առանձնահատկությունները, այդ թվում բնական և մարդածին ռեսուրսները, ծառայությունները և ենթակառուցվածքը, հմտությունները և կարողությունները, որոնք ազդեցություն ունեն զբոսաշրջության ուղղության մրցակցային դիրքի վրա:

Հնարավորությունների և սպառնալիքների շարքում դիտարկվել են այն արտաքին իրադարձություններն ու հանգամանքները, որոնք դուրս են զբոսաշրջության նպատակակետի անմիջական վերահսկողությունից, սակայն կարող են օգնել կամ խոչընդոտել զբոսաշրջության զարգացմանը: Օրինակ՝ զբոսաշրջիկների նախասիրությունների փոփոխություններ, տնտեսական աճ/անկում, զբոսաշրջության շուկայի զարգացումներ, ֆինանսավորման արտաքին աղբյուրների

առկայություն, միջսահմանային երթևեկության փոփոխություններ, ազգային արժույթի արժևորում կամ բացասական անկանխատեսելի իրադարձություններ (օրինակ՝ երկրաշարժ, սողանք, ահաբեկչություն, պատերազմ):

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ |
|---|---|
| - Հարուստ մշակութային ժառանգություն.<br>- Հարուստ և բազմազան բնություն<br>- Ռաֆթինգ և քայլարշավներ<br>- Տեղակայում<br>- Տեղական փորձառություններ<br>- Ինովացիոն և սմարտ մարզ<br>- Հետխորհրդային արդյունաբերական ժառանգություն | - Սահմանափակ ճանաչելիություն և բրենդինգ<br>- Անբարեկարգ ճանապարհներ և ենթակառուցվածքներ<br>- Տրանսպորտային ենթակառուցվածքի, ծառայությունների և կապի պակաս<br>- Բնապահպանական խնդիրներ և հանքարդյունաբերություն<br>- Հաճախորդների սպասարկման ցածր որակ<br>- Սահմանափակ գիշերակացի ծառայություններ և բարձրակարգ կացարանների պակաս<br>- Տեղի բնակչության մտածելակերպը և կարծատիպերը: |
| **ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | **ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐ** |
| - Տարածաշրջանային համագործակցություն<br>- Քիչ զարգացած մշակութային վայրեր.<br>- Զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացում<br>- Մուտք նոր շուկաներ<br>- Ռեսուրսների լավ կառավարում<br>- Ներդրումներ և ենթակառուցվածքի զարգացում<br>- Կայուն զբոսաշրջության զարգացում | - Քաղաքական իրավիճակ<br>- Տնտեսական մարտահրավերներ<br>- Դեպի Հայաստան ուղիղ չվերթների պակաս<br>- Բնական աղետներ<br>- Մրցակից ուղղություններ |

Փաստաթղթի մշակման ժամանակ իրականացված քննարկումների ընթացքում Լոռու մարզի զբոսաշրջության ոլորտի շահառուները առանձնացրել են մարզի, որպես զբոսաշրջային նպատակակետի, հետևյալ ուժեղ և թույլ կողմերը, ինչպես նաև հնարավորություններն ու սպառնալիքները

Ուժեղ կողմերից առանձնացվել են՝

- **Հարուստ մշակութային ժառանգությունը**՝ 3.045 հուշարձաններ և կոթողներ, ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցանկում ներառված Սանահինի և Հաղպատի վանական համալիրները, Թումանյանի մշակութային ժառանգությունը:
- **Հարուստ և բազմազան բնությունը**, որոնց թվում են անտառներ, ջրվեժներ, բնության տեսարաններ, 3 պահպանվող տարածքներ և 2 բուսաբանական այգի
- Ռաֆթինգ ծառայությունները և քայլարշավների արահետները. Դեբեդը Հայաստանում ռաֆթինգի համար միակ հարմար գետն է: Լոռին ունի ամենամեծ քայլարշավային արահետների ցանցը տարածաշրջանում:
- **Տեղակայումը**. Լոռին տեղակայված է Վրաստան և Սևծովյան տարածաշրջան հասնելու ճանապարհին, ինչպես նաև Երևանից և Թբիլիսիից ոչ շատ մեծ հեռավորության վրա է: Մարզով անցնում են չորս միջպետական մայրուղիները և երկաթուղին՝ դեպի Վրաստան:
- **Տեղական փորձառությունների առկայությունը**. Սա ներառում է հյուրընկալ մարդկանց, ուտելի բույսերը, խոհանոցը, ինչպես նաև վերջիններիս հետ կապված փորձառությունները:

- **Նորարարական և սմարտ մարզ**. Լոռիում գործում են ՔՈԱՖ սմարտ կենտրոնը և Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնը, որոնք առանձնացնում են մարզը որպես նորարական և սմարտ մոտեցումներին հավատարիմ:
- **Հետխորհրդային արդյունաբերական ժառանգությունը**. Վանաձորի լքված գործարանները, ինչպես նաև մարզի այլ հատվածներում տեղակայված չգործող հետխորհրդային արդյունաբերական ժառանգությունը մեծ հետաքրքրություն են վայելում զբոսաշրջիկների շրջանում:

Որպես մարզի թույլ կողմեր Լոռու զբոսաշրջության ոլորտի շահագրգիռ կողմերն առանձնացրին՝

- **Լոռու մարզի մասին սահմանափակ տեղեկացվածությունը և բրենդինգի բացակայությունը:** Լոռին հայտնի չէ որպես զբոսաշրջային հայտնի նպատակետ աշխարհում, ինչը ավելի է դժվարացնում մարզում զբոսաշրջության զարգացման հնարավորությունները:
- **Անբարեկարգ ճանապարհներ և ենթակառուցվածքներ**. Լոռու մարզի որոշ հատվածներում առկա են անբարեկարգ ճանապարհներ, որոշ համայնքներում և գյուղերում կան հատվածներ, որտեղ բացակայում են նաև ասֆալտապատ ճանապարհները: Մարզի առանձին հատվածներում առկա է նաև ջրամատակարարման խնդիր, նկատվում են էլեկտրամատակարարման և գազամատակարարման հաճախակի խափանումներ: Աղբահանության կարգավորման խնդիրներ նույնպես առկա են:
- **Տրանսպորտային ենթակառուցվածքի, ծառայությունների և կապի պակաս**. Լոռու մարզում չկան միջազգային կամ տեղական ավտովարձույթի կամ այլ տրանսպորտային միջոցների վարձակալության ծառայություններ (բացի մի քանի հեծանիվների վարձույթի հնարավորությունից): Միջհամայնքային տրանսպորտային ցանցի թերզարգացած լինելը, ինչպես նաև Հայաստանի ընդհանուր հասանելիության մակարդակը ուղղակիորեն կապված են մարզում զբոսաշրջության զարգացման հետ:
- **Բնապահպանական խնդիրներ և հանքարդյունաբերություն.** մարզում ոչ բոլոր զբոսաշրջային բիզնեսները, շահագրգիր կողմերը և բնակիչներն են լավ տեղեկացված մարզի բնապահպանական խնդիրներից և բնապահպանական պատասխանատվության մոտեցումներից:
- Հաճախորդների սպասարկման ցածր որակ. մարզում առկա է լեզուների իմացության, որակյալ մարդկային ռեսուրսների և սպասարկման հմտությունների պակաս: Գյուղական համայնքներում սա ավելի ակնառու է:
- **Սահմանափակ գիշերակացի ծառայություններ.** բարձրակարգ հյուրանոցների պակաս է նկատվում ամբողջ մարզում:
- **Տեղի բնակչության մտածելակերպը և կարծատիպերը.** երիտասարդների և կանանց մասնակցությունը սահմանափակող կարծրատիպերը կամ մշակութային նորմերը հանգեցնում են զբոսաշրջության աշխատուժի սակավության, ինչն էլ ուղղակիորեն ազդում է ծառայությունների որակի վրա:

Լոռու մարզի զբոսաշրջության զարգացման հնարավորությունների շարքում ոլորտի շահագրգիռ կողմերը աշխատանքային հանդիպումների ընթացքում առանձնացրեցին՝

- **Տարածաշրջանային համագործակցությունը՝** մասնավորապես հայ-վրացական անդրսահմանային փաթեթների և դրանց հետագա խթանման հնարավորությունները
- **Քիչ զարգացած մշակութային վայրերի օգտագործումը՝** որպես հետաքրքիր զբոսաշրջային ռեսուրս, օրինակ Արամյանցի առանձնատունը, Միկոյանի թանգարանը և այլն:
- **Զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացումը**. զբոսաշրջային նոր արդյունքի մշակման համար առկա ռեսուրսները և դրանց զարգացման հնարավորությունները
- **Մուտքը նոր շուկաներ**. Հայաստանի՝ որպես զբոսաշրջային ուղղության խթանման հնարավորությունները նոր թիրախային շուկաներում (օրինակ՝ Չինաստան և Ճապոնիա)

- **Ռեսուրսների լավ կառավարման հնարավորությունները**. մասնավորապես երկու տեղական օդանավակայանների տարածքի օգտագործման հնարավորությունը մեծ միջոցառումների համար:
- **Ներդրումներ և ենթակառուցվածքի զարգացումը**. ներդրումների ներգրավման խրախուսում՝ միտված մարզի զբոսաշրջային ներուժը բարձրացնելուն, զբոսաշրջության ոլորտում ներդրումների վերադարձի պոտենցիալի ընդգծում:
- **Կայուն զբոսաշրջության զարգացումը**. համաշխարհային միտում, որն ուղղված է բնության պահպանությանը և պատասխանատու զբոսաշրջային պրակտիկաների: Սրա զարգացումը և իրազեկվածության բարձրացումը հնարավորություն կտա Լոռու մարզին գրավել էկոլոգիապես գիտակից և պատասխանատու զբոսաշրջիկների:

Վերլուծության արդյունքում շահագրգիռ կողմերի բարձրացրած սպառնալիքներն էին՝

- **Քաղաքական իրավիճակը**. երկրում կամ հարակից շրջաններում քաղաքական անկայունությունը կամ հակամարտությունները կարող են վանել զբոսաշրջիկներին և խոչընդոտել զբոսաշրջության զարգացմանը:
- **Տնտեսական մարտահրավերները**. տնտեսության անկումը, գնաճը և արտարժույթի փոխարժեքի տատանումները աշխարհում և Հայաստանում կարող են ազդել պոտենցիալ զբոսաշրջիկների կողմից կատարվող ծախսերի վրա: Այս մարտահրավերները կարող են հանգեցնել ոլորտում բարձր և անմրցունակ գների և զբոսաշրջության ոլորտի եկամուտների նվազման:
- **Ուղիղ չվերթների պակասը դեպի Հայաստան**. այս հանգամանքը սահմանափակում և խոչընդոտում է միջազգային զբոսաշրջիկների հասանելիության և հարմարավետության ապահովմանը, ինչպես նաև ավելի լայն շուկայական սեգմենտ թիրախավորելու հնարավորությանը:
- **Բնական աղետները**. Լոռին, ինչպես ցանկացած այլ մարզ, կարող է ենթարկվել բնական աղետների, ինչպիսիք են երկրաշարժերը կամ սողանքները, սելավները որոնք կարող են վնաս հասցնել ենթակառուցվածքներին, խաթարել զբոսաշրջային գործունեությունը և ազդել այցելուների անվտանգության վրա:
- **Մրցակից ուղղությունները**. ներքին և միջազգային շուկայում նմանատիպ ծառայությունները և փորձառություններ առաջարկող այլ ուղղությունները:

SWOT վերլուծությունից բխում են այն հիմնական գործողությունները, որոնց իրականացումը լրջորեն կնպաստի Լոռու մարզի, որպես զբոսաշրջության ուղղության կայացմանը և զարգացմանը: Այդ գործողություններն ամփոփված են մի քանի կետերում՝

- Համապարփակ մարքեթինգային ռազմավարության իրականացում՝ գլոբալ և լոկալ մակարդակով իրազեկվածության բարձրացման և Լոռու համար առանձնահատուկ բրենդի ինքնություն ստեղծելու համար:
- Զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացում և բազմազանության ներկայացում, ինչպիսիք են արկածային զբոսաշրջությունը, մշակութային հատուկ առաջարկները, էթնոզբոսաշրջություն (օրինակ՝ մոլոկանների ժառանգությունը), առողջարարական, սպորտային և գործնական զբոսաշրջության փորձառությունները և հնարավորությունները՝ այցելուների լայն շրջանակ ներգրավելու համար:
- Լոռու տարբերակում մրցակից ուղղություններից և եզակի վաճառքի առաջարկների սահմանում՝ ընդգծելով նրա յուրահատուկ մշակութային ժառանգությունը, բնական տեսարժան վայրերը և բացառիկ փորձառությունները:
- Դիրքավորում որպես կայուն զբոսաշրջության ուղղություն, ներառյալ բնության պահպանման, համայնքների ներգրավման և պատասխանատու զբոսաշրջության փորձառությունների շեշտադրումը որպես վաճառքի յուրահատուկ առաջարկ:

- Ենթակառուցվածքի մարտահրավերների լուծում, ներառյալ ճանապարհները, տրանսպորտը և կոմունալ ծառայությունները՝ զբոսաշրջիկների համար ընդհանուր հասանելիությունն ու հարմարավետությունը բարձրացնելու համար:
- Զբոսաշրջության զարգացման գործընթացում տեղական համայնքների ակտիվ ներգրավվածության ապահովում, սեփականության զգացում ստեղծելով և կայուն պրակտիկաներ խթանելով:
- Ներդրումների ակտիվ ներգրավում ենթակառուցվածքի զարգացման նպատակով՝ կենտրոնանալով կացարանների, տրանսպորտի և միջոցառումների հնարավորությունների վրա՝ այցելուների ընդհանուր փորձը բարելավելու համար:
- Վերապատրաստման ծրագրերի ապահովում՝ ծառայություններ մատուցողների շրջանում լեզվական հմտությունները, հյուրընկալության հիմունքները և միջմշակութային հաղորդակցության իրազեկությունը բարձրացնելու համար:
- Տարածաշրջանային գործընկերների հետ ամուր համագործակցության հաստատում, հատկապես Վրաստանի՝ անդրսահմանային շրջագայությունների և համատեղ նախաձեռնությունների համար:
- Շրջակա միջավայրի պահպանում և պատասխանատու զբոսաշրջության փորձառությունների խթանում՝ առաջնահերթություն տալով կայուն զբոսաշրջության պրակտիկաներին, ներառյալ բնության պահպանությունը, պատասխանատու զբոսաշրջության փորձը և շրջակա միջավայրի պահպանության համար համայնքի ղեկավարած նախաձեռնությունները:
- Զբոսաշրջության կառավարման համար տեխնոլոգիաների կիրառում, ներառյալ օգտատերերի համար հարմար կայքեր, բջջային հավելվածներ և թվային հարթակներ՝ անխափան փոխազդեցություններ ապահովելու և տեղեկատվության տարածումը հեշտացնելու համար:
- Շահագրգիռ կողմերի միջև ամուր գործընկերության խթանում՝ մարտահրավերները միասին լուծելու և զբոսաշրջության հաջող նախաձեռնություններն իրականացնելու համար:

## ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ ԿԱՅՈՒՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԼԱԿԱՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Զբոսաշրջության տեսլականը վերաբերում է երկարաժամկետ ռազմավարական ծրագրին կամ Լոռու մարզի ցանկալի ապագա վիճակի պատկերացումներին՝ զբոսաշրջության զարգացման և խթանման տեսանկյունից: Դրա նպատակն է Լոռու մարզի զբոսաշրջության ոլորտում ներգրավված շահագրգիռ կողմերի միջև որոշումների կայացման, ներդրումների և համագործակցության հիմք ստեղծելը: Այն պետք է օգնի միավորել ջանքերն ու ռեսուրսները դեպի ընդհանուր տեսլական և ծառայի որպես ճանապարհային քարտեզ՝ հաջորդ տասնամյակի ընթացքում զբոսաշրջային նպատակակետի զարգացման համար:

Լոռու մարզում զբոսաշրջության ապագայի տեսլականը հետևյալն է.

## VISION STATEMENT

**VaLORIsing our natural and cultural heritage**

**ExpLORIng new opportunities for our tourism development**

**TaiLORIng our tourism offer to exceed guest wishes**

Արժևորել մեր բնական և մշակութային ժառանգությունը

Բացահայտել զբոսաշրջության զարգացման նոր հնարավորություններ

Հարմարեցնել մեր զբոսաշրջային առաջարկը հյուրերի ցանկությունները գերազանցելուն

Մեր տեսլականն է. Լոռու մարզը վերածել կայուն, ապագային միտված և կենսունակ զբոսաշրջային ուղղության, որը կներկայացնի մարզի հարուստ մշակութային ժառանգությունը, հիասքանչ բնական տեսարանները և կապահովի իսկական ու կլանող փորձառություններ: Մեր նպատակն է. խթանել տնտեսական աճը, շրջակա միջավայրի պահպանությունը և բարձրացնել տեղական համայնքների բարեկեցությունը՝ միաժամանակ առաջարկելով այցելուներին բացահայտումների եզակի և անմոռանալի ճամփորդություն:

Հաշվի առնելով, որ Հայաստանում տարբեր զբոսաշրջային ուղղություններն ունեն զարգացման տարբեր մակարդակներ և ռեսուրսների անհավասարաչափ բաշխվածություն, ՀՀ էկոնոմիկայի նախարարության Զբոսաշրջության կոմիտեն վերջին շրջանում դիտարկում է զբոսաշրջության զարգացման կլաստերային մոտեցումը: Ըստ այդ մոտեցման, մարզը համարվում է ոչ թե ամբողջական, միատարր միավոր, այլ տարբեր բովանդակություն, խտություն և ինքնություն ունեցող մի քանի կլաստերների հանրագումար: Որոշ կլաստերներ կարող են իրենց մեջ ներառել նաև հարակից մարզերում գտնվող զբոսաշրջային այցելավայրեր, եթե վերջիններս ավելի համակցելի են սույն կլաստերին: Համապատասխանաբար, առաջարկվում է կիրառել զարգացման, առաջխաղացման և կառավարման տարբեր մոտեցումներ առանձին կլաստերների համար:

Ըստ ՀՀ էկոնոմիկայի նախարարության Զբոսաշրջության կոմիտեի «Զբոսաշրջության ոլորտի կլաստերային զարգացման հայեցակարգի» Լոռու մարզում առաջարկվում է առանձնացնել երկու հիմնական կլաստերներ՝ Ալավերդու կլաստերը և Դեբեդի կիրճը: Սույն ճանապարհային քարտեզի շրջանակներում առաջարկվում է դիտարկել նաև Վանաձոր համայնքի կլաստերը, կամ առաջնորդվել «Լոռու մարզի զբոսաշրջության զարգացման ռազմավարության» մեջ առաջարկվող երեք կլաստերի նկարագրով: Դրանք են Գուգարքի և Սպիտակի կլաստերը, Թումանյանի ողջ տարածաշրջանի կլաստերը, Ստեփանավանի և Տաշիրի տարածաշրջանի կլաստերը:

Լոռու մարզի զբոսաշրջության զարգացման տեսլականի իրականացումը հիմնված է հետևյալ հինգ սկզբունքների վրա, որոնք վերաբերում են զբոսաշրջության բոլոր շահագրգիռ կողմերին.

- **ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅՈՒՆ**. ռազմավարական որոշումների կայացման և գործառնական միջոցառումներ իրականացման ժամանակ հաշվի առնել զբոսաշրջության վրա ազդող մի շարք արտաքին գործոնների ազդեցությունը և ոլորտի սահմանափակ վերահսկողությունը դրանց վրա:
- **ՊԱՏՐԱՍՏԱԿԱՄՈՒԹՅՈՒՆ.** ինքնաքննադատորեն մոտենալ անցյալին և ներկային՝ արդյունավետ զբոսաշրջության ապագա ունենալու համար:
- **ԿԱՆԽԱԳԻՏԱԿՑՈՒՄ.** ընդունել, որ զարգացմանն ուղղված գործողություններն ու նախաձեռնությունները միտված են թե ապագայում խնդիրներ լուծելուն, և թե խնդիրներ հարուցելուց խուսափելուն:
- **ԽՐԱԽՈՒՍՈՒՄ**. խրախուսել և ուղղորդել զբոսաշրջության ոլորտի շահառուներին՝ ստեղծել հավելյալ արժեք, որպեսզի պահպանեն գործունեությունը:
- **ՋԱՆՔ**. ջանքեր գործադրել ճկուն զբոսաշրջային ուղղություն և բիզնես մշակույթ ձևավորելու համար:

Ելնելով Լոռու մարզում զբոսաշրջության զարգացման տեսլականից՝ ձևավորվել են հետևյալ վեց ռազմավարական նպատակները.

**ՆՊԱՏԱԿ 1. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄ**

Առաջնահերթություն տալ Լոռու մշակութային ժառանգության պահպանմանը՝ ներառյալ մարզի պատմական վայրերը, վանքերը, ավանդական արվեստներն ու արհեստները: Սրանց պահպանումը և ներկայացումը թույլ է տալիս խորացնել այցելուների պատկերացումը Հայաստանի հարուստ պատմության և մշակութային ավանդույթների մասին ու ստեղծել հնարավորություններ՝ տեղացի արհեստագործների և մշակութային համայնքների զարգացման համար:

**ՆՊԱՏԱԿ 2. ԲՆԱՀԵՆՔ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ**

Խրախուսել կայուն զբոսաշրջության փորձառությունները, որոնք պաշտպանում և պահպանում են Լոռու բազմազան էկոհամակարգերը՝ ներառյալ անտառները, գետերը և պահպանվող տարածքները: Բնահենք պատասխանատու զբոսաշրջության միջոցով այցելուներին առաջարկել բացօթյա արկածների, էկոտուրիզմի և բնության հետ ներդաշնակ փորձառությունների հնարավորություններ՝ միաժամանակ նպաստելով մարզի կենսաբազմազանության պահպանությանը:

**ՆՊԱՏԱԿ 3. ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ ԵՎ ՀԶՈՐԱՑՈՒՄ**

Ակտիվորեն ներգրավել տեղական համայնքներին զբոսաշրջության զարգացման գործընթացներում: Հնարավորություն տալ նրանց դառնալ ոլորտի զարգացման ակտիվ մասնակիցներ ու շահակիցներ: Համայնքային զբոսաշրջության նախաձեռնությունների խթանման նպատակն է ստեղծել տնտեսական զարգացման հնարավորություններ տեղի բնակիչների համար, խրախուսել մշակութային փոխանակումները և վերափոխել վերաբերմունքը մարզի հարուստ ժառանգության նկատմամբ: Համայնքի ներկայացուցիչների հմտություններն ու գիտելիքները բարձրացնելու համար իրականացնել վերապատրաստման ծրագրեր, կարողությունների զարգացման և ձեռներեցության աջակցությանն ուղղված միջոցառումներ, որոնք կապահովեն նրանց լիարժեք ներգրավվածությունը զբոսաշրջության արժեշղթայում:

**ՆՊԱՏԱԿ 4. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ԿԱՊ**

Առաջնահերթություն տալ զբոսաշրջային անհրաժեշտ ենթակառուցվածքներին, ինչպիսիք են որակյալ կացարանները, այցելուների տեղեկատվական կենտրոնները, տրանսպորտային ցանցերը և թվային կապի զարգացումը: Սա կբարելավի այցելուների կացության փորձը, կխեշտացնի անխափան տեղաշարժը մարզում և հնարավորություն կտա արդյունավետ կառավարել նպատակակետը: Տեղական իշխանությունների հետ համագործակցելով՝ բարելավել ճանապարհները և հասարակական տրանսպորտը, ինչպես նաև խրախուսել կայուն շարժունակությունը՝ ապահովելով հասանելիությունը ինչպես ներքին, այնպես էլ՝ միջազգային զբոսաշրջիկների համար:

### ՆՊԱՏԱԿ 5. ԻՆՔՆԱՏԻՊ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽԹԱՆՈՒՄ

Խթանել ինքնատիպ փորձառական զբոսաշրջային առաջարկները, որոնք ընդգծում են Լոռու մարզի եզակի մշակութային և բնական արժեքները: Սա հնարավորություն կտա այցելուներին շփվել տեղական համայնքների հետ, մասնակցել ավանդական միջոցառումներին, համտեսել տեղական խոհանոցի ուտեստները և բացահայտել քիչ հայտնի ուղղությունները: Պատասխանատու զբոսաշրջային փորձառությունների խրախուսման նպատակն է կապեր ստեղծել այցելուների և տեղացիների միջև՝ խթանելով միջմշակութային փոխըմբռնումն ու արժևորումը:

### ՆՊԱՏԱԿ 6. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ

Գիտակցել, որ զբոսաշրջության զարգացման տեսլականի իրականացումը պահանջում է համագործակցություն բոլոր շահագրգիռ կողմերի՝ ներառյալ պետական մարմինների, զբոսաշրջության պատասխանատու կառույցների, տեղական համայնքների, մասնավոր հատվածի ձեռնարկությունների և ՀԿ-ների միջև: Ստեղծել համագործակցության հնարավորություններ և երկխոսության հարթակներ գիտելիքների փոխանակման և համակարգման համար՝ ապահովելու Լոռու մարզում զբոսաշրջության զարգացման ամբողջական մոտեցում: Ստեղծել կանոնավոր մոնիտորինգի, գնահատման և հետադարձ կապի մեխանիզմներ՝ առաջընթացը գնահատելու, մարտահրավերները լուծելու և ըստ պահանջի ռազմավարությունները հարմարեցնելու համար:

## ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ ԿԱՅՈՒՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### Զբոսաշրջության ոլորտի ուսումնասիրություն ու վիճակագրություն

Զբոսաշրջության ոլորտում թարմացվող տվյալները կարևոր են կայուն զարգացման համար, որպեսզի քաղաքականություն մշակողներն ու ոլորտի շահառուները կարողանան պատկերացում կազմել ոլորտի զարգացման դինամիկայի մասին, բացահայտել միտումները և կայացնել տեղեկացված որոշումներ գործողությունների պլանավորման և ռեսուրսների բաշխման վերաբերյալ: Լոռու մարզում զբոսաշրջության հետազոտությունների և վիճակագրության համապարփակ շրջանակ ստեղծելու համար առաջնայնություն պետք է տալ հետևյալ հիմնական միջոցառումներին:

- Հետազոտական նախաձեռնությունների մեկնարկ. իրականացնել հետազոտական նախաձեռնություններ, որոնց միջոցով կուսումնասիրվեն այցելուների դեմոգրաֆիան, նախապատվությունները, վարքագիծը, ինչպես նաև ոլորտում զբաղվածության ցուցանիշները բնութագիրը, աշխատանքային դերերը, զբաղվածության սեզոնային տատանումները, աշխատաշուկայում փոփոխությունները, զբոսաշրջության տնտեսական ազդեցությունները, շուկայի արդի միտումներն ու պահանջները և այլն: Սա թույլ կտա գնահատել այցելուների փոփոխվող կարիքները, ավելի լավ արդարացնել նրանց սպասելիքներն ու բավարարել պահանջմունքները, ինչպես նաև՝ համապատասխանաբար հարմարեցնել և թարմացնել մարզում առկա զբոսաշրջային առաջարկներն ու ռազմավարությունները: Այս տվյալները ամուր

հիմքեր կստեղծեն նպատակային նախաձեռնություններ մշակելու համար, որոնք ուղղված կլինեն ոլորտում հմտությունների բացերը լրացնելուն և զբաղվածություն ապահովվելուն:

- Տվյալների հավաքման և վերլուծության ստանդարտացված ընթացակարգերի մշակում և իրականացում. ոլորտում վերլուծություններ իրականացնելու համար անհրաժեշտ տվյալների հավաքման, մշակման և վերլուծության ընդհանուր մոտեցումը կապահովի զբոսաշրջությանը վերաբերվող տվյալների ճշգրտությունը, հավաստիությունը և համադրելիությունը: Սա հնարավորություն կտա արժեքավոր եզրակացություններ անել և տվյալների վրա հիմնված որոշումներ կայացնել:

- Հետազոտության արդյունքների և վիճակագրության ժամանակին ու պատշաճ տեսքով տարածում: Սա ներառում է հարմար և հեշտ կիրառելի հարթակների, հաշվետվությունների և հրապարակումների մշակում, որոնց միջոցով հիմնական արդյունքները փոխանցվելու են շահագրգիռ կողմերին, քաղաքականություն մշակողներին, բիզնեսներին և ավելի լայն հանրությանը:

**Նպատակակետի մարքեթինգը և բրենդավորումը**

Այժմ Լոռու տարածաշրջանի զբոսաշրջության կառավարման գրասենյակ ՀԿ-ն մարքեթինգի մասով կենտրոնացած է մի քանի հիմնական նպատակների վրա, դրանք են՝
- Ստեղծել մարզի գրավիչ զբոսաշրջային պատկեր՝ զբոսաշրջության մասնագետների կողմից առկա ռեսուրսների, հնարավորությունների և ծառայությունների որակի տրամադրման ուսումնասիրության միջոցով:
- Խթանել մարզը որպես զբոսաշրջային նպատակակետ մի շարք առցանց և առկա մարքեթինգային ուղիների միջոցով, ներառյալ travellori.am կայքը, Google որոնման համակարգը, սոցիալական մեդիա հարթակները, ինչպիսիք են TripAdvisor, Facebook, Instagram, TikTok և այլն:
- Մշակել և խթանել անհատական զբոսաշրջիկների համար հարմարեցված փաթեթներ:
- Լոռու զբոսաշրջային ապրանքները ներկայացնել զբոսաշրջային օպերատորներին՝ ներկայացնելով համապարփակ առաջարկներ:
- Բարձրացնել մարզի տեսանելիությունը՝ համագործակցելով ազդեցիկ մարդկանց հետ (influencer), որոնք կարող են նպաստել Լոռին որպես զբոսաշրջային նպատակակետի առաջխաղացման գործընթացին:
- Կատարել այցելուների հարցումներ՝ կարծիքներ հավաքելու և Լոռիում զբոսաշրջության փորձը բարելավելու նպատակով:
- Ստեղծել գրավիչ նյութեր, ինչպիսիք են լուսանկարները, տեսանյութերը և բրոշյուրները՝ տարածաշրջանում առկա տեսարժան վայրերը և փորձառությունները ցուցադրելու ու ներկայացնելու համար:

Այժմ օգտագործվում են հետևյալ կարգախոսները.

**«Արի՛ Լոռի և բացահայտիր քո՛ իսկ Լոռին»** Լոռու մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի կողմից,
**«Այցելեք Լոռի - Բացահայտեք Հայաստանի գանձերը»** կամ **«Այցելեք Լոռի մեկ օրով, մեկ ամսով, մի կյանք»** Լոռու տարածաշրջանի զբոսաշրջության կառավարման գրասենյակ ՀԿ-ի կողմից:

Թեև դեռևս չկա Լոռու զբոսաշրջային մարքեթինգային ռազմավարություն, ոլորտի շահակիցների միջև կան մարզի համար ցանկալի բրենդինգի ինքնության հետ կապված ընդհանուր մոտեցումներ,

որոնք ձեռք են բերվել քննարկումների և խորհրդակցությունների ընթացքում: Դրանք ամփոփված են հետևյալ կերպ.

- Ռացիոնալ հատկանիշներ. այն շոշափելի հատկանիշներն ու տեսարժան վայրերն են, որոնք գրավիչ են դարձնում Լոռու մարզը, ներառյալ բնական տեսարժան վայրերը, պատմական վայրերը, բացօթյա միջոցառումները և խոհարարական փորձառությունները:
- Զգացմունքային հատկանիշներ. սրանք ընդգծում են Լոռի այցելելու էմոցիոնալ և փորձառական ասպեկտները, ինչպիսիք են հանգստությունը, բնությամբ և մարդկանցով հիացմունքը, ակնկալիքների իրականացումը և խաղաղության, հանգստության զգացումը:
- Ապրանքանիշի անհատականություն. Լոռին ներկայացված է որպես հարուստ պատմամշակութային ժառանգություն ունեցող վայր, որտեղ բնության գեղեցկությունը հիանալի կերպով լրացնում է իր ժողովրդի ջերմությանն ու հյուրընկալությանը:
- Դիրքավորման հայտարարագիր. ընդգծում է Լոռու եզակի աշխարհագրական դիրքը, պատմամշակութային հուշարձանները, բազմազան առաջարկները և բնական ու մարդածին տեսարժան վայրերի համադրությունը, որոնք առանձնացնում են մարզը որպես զբոսաշրջային ուղղություն:
- Ապրանքանիշի էությունը. Լոռու էությունը ընկալվում է բնության, մարդկանց և մշակութային ժառանգության միջև ներդաշնակ համադրության միջոցով: Այն նկարագրվում է որպես լեգենդների մարզ, որտեղ անցյալն ու ներկան գոյակցում են ու հնարավորություններ են առաջարկում երիտասարդացման և ստեղծագործական բացահայտման համար:

### ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԲՐԵՆԴԻՆԳԻ ԲՈՒՐԳԸ




Բրենդինգի բուրգի մշակումը մարզի համար ապրանքանիշի ամուր ինքնության հաստատման սկզբնական քայլ էր: Այնուամենայնիվ, կարևոր է համապարփակ մարքեթինգային ռազմավարության մշակման միջոցով հետագայում ուրվագծել և կատարելագործել այն: Այսպիսով, Լոռու՝ որպես զբոսաշրջային նպատակակետի, մարքեթինգը և բրենդինգը պետք է կենտրոնանան իր յուրահատուկ գրավչությունների, մշակութային ժառանգության և բնական գեղեցկության խթանման վրա՝ այցելուների բազմազան շրջանակ գրավելու համար: Մի քանի ուղղություններ, որոնց պետք է անդրադառնալ.

- **Թիրախային շուկաների և դրանց սեգմենտավորման բացահայտում.**
  Իրականացնել շուկայի հետազոտություն և բացահայտել Լոռու մարզի զբոսաշրջության հիմնական թիրախային շուկաները: Դրանք պետք է հիմնված լինեն այցելուների նախասիրությունների, դեմոգրաֆիայի և շուկայի միտումների վրա, որպեսզի օգնեն

հարմարեցնել մարքեթինգային ջանքերը արդյունավետորեն հասնել լսարանին (տես նաև Լոռու մարզի այցելուների ընդհանուր սեգմենտավորումը):

- **Ապրանքանիշի մշակում և համոզիչ հայտարարագիր.**
  Մշակել Լոռու համար տարբերակիչ և գրավիչ ապրանքանիշ, որն ընդգծում է իր վաճառքի յուրահատուկ առաջարկը, ինչպիսին են հարուստ մշակութային ժառանգությունը, բնական լանդշաֆտները և իսկական փորձառությունները, որոնք ազդեցություն կունենան թիրախային շուկաների վրա և կտարբերակեն Լոռին այլ ուղղություններից:
- **Թվային մարքեթինգ և առցանց ներկայություն.**
  Օգտագործել թվային մարքեթինգի ուղիները և առցանց հարթակները՝ պոտենցիալ այցելուներին հասնելու համար: Մշակել օգտատերերին հարմար և ակնահաճո գրավիչ նպատակակետի կայք (կամ լավացնել առկա կայքը), պահպանել ակտիվ սոցիալական մեդիայի պրոֆիլներ և օգտագործել որոնման համակարգի օպտիմալացման տեխնիկան (SEO)՝ առցանց տեսանելիությունը և ներգրավվածությունը ավելացնելու համար:
- **Բովանդակության ստեղծում և պատմասածություն (storytelling)**
  Ստեղծել գրավիչ և տեղեկատվական բովանդակություն, որը ներկայացնում է Լոռվա պատմությունն ու լեգենդները: Ընդգծել դրա պատմական տեսարժան վայրերը, մշակութային ավանդույթները, բացօթյա և տեղական փորձառությունները: Գրավիչ վիզուալ նյութերի, տեսանյութերի, բլոգերի և հոդվածների միջոցով հետաքրքրություն հարուցել և գրավել պոտենցիալ այցելուների երևակայությունը:
- **Գործընկերություն ազդեցիկ մարդկանց (Influencer-ների) և ճամփորդական բլոգերների հետ**
  Համագործակցություն ճամփորդական Influencer-ների, բլոգերների և բովանդակություն ստեղծողների (content creator) հետ, ովքեր ուժեղ առցանց ներկայություն ունեն և համահունչ են Լոռու թիրախային շուկաներին: Հրավիրել նրանց Լոռի և հնարավորություն տալ կիսվելու իրենց փորձով հետևորդների հետ: Սա կմեծացնի մարզի հասանելիությունն ու տեսանելիությունը որպես զբոսաշրջային ուղղություն:
- **Մասնակցություն զբոսաշրջային ցուցահանդեսներին**
  Լոռու թիրախային շուկաներին համահունչ ազգային և միջազգային ցուցահանդեսների մասնակցությունը լավ հնարավորություն է Լոռին որպես զբոսաշրջային ուղղություն ներկայացնելու և խթանելու համար:
- **Ճանաչողական այցերի իրականացում.**
  Ճանաչողական այցերի կազմակերպումը կխրախուսի տարածաշրջանային և միջազգային տուրօպերատորներին համապատասխան թիրախային շուկաներից ներառել Լոռու մարզն իրենց միջսահմանային և միջտարածաշրջանային փաթեթների մեջ: Այս ճամփորդությունները զբոսաշրջային օպերատորներին և ԶԼՄ-ների ներկայացուցիչներին կառաջարկեն անմիջական փորձառություններ Լոռու տարբեր տեսարժան վայրերի, մշակութային ժառանգության, բնական գեղեցկության և ջերմ հյուրընկալության մասին, ինչպես նաև կխթանեն համագործակցությունը և կբարձրացնեն մարզի տեսանելիությունն ու ճանաչելիությունը: Սա նպատակ ունի գրավել ավելի շատ այցելուներ և դարձնել մարզը ավելի գրավիչ վայր զբոսաշրջային շուկայում:
- **Համագործակցություն զբոսաշրջային օպերատորների և գործակալությունների հետ**
  Ամուր հարաբերություններ ստեղծել զբոսաշրջային գործակալությունների և օպերատորների հետ, որպեսզի նրանք ներառեն Լոռին իրենց փաթեթներում: Տրամադրել նրանց նպատակակետի համապարփակ տեղեկատվություն, գովազդային նյութեր և խթաններ, խրախուսել նրանց, որ գովազդեն և առաջարկեն Լոռին՝ որպես նախընտրելի ուղղություն:
- **Մշակութային և տոնական միջոցառումներ**
  Կարևորել մշակութային փառատոնները, միջոցառումները և տոնակատարությունները Լոռիում, որպեսզի գրավել այն այցելուներին, ովքեր հետաքրքրված են տեղական ավանդույթներով և տոնակատարություններով: Աջակցել և խթանել այս իրադարձությունները որպես նպատակակետի մարքեթինգային գործողությունների մի մաս:
- **Ներգրավել տեղական համայնքներին**

Ներգրավել տեղական համայնքներին նպատակակետի մարքեթինգային միջոցառումներում՝ խրախուսելով նրանց ցուցադրել իրենց յուրահատուկ մշակութային ժառանգությունն ու ավանդույթները: Խթանել համայնքի վրա հիմնված զբոսաշրջության նախաձեռնությունները, որոնք ապահովում են իսկական փորձառություններ և օգուտ են բերում տեղական տնտեսությանը:

- **Կայուն և պատասխանատու զբոսաշրջային հաղորդագրություններ.**
Շեշտել Լոռու հավատարմությունը կայուն և պատասխանատու զբոսաշրջային փորձառություններին մարքեթինգային արշավներում: Կարևորել մարզի ջանքերը շրջակա միջավայրի պահպանման, տեղական համայնքներին աջակցելու և մշակութային ժառանգության պահպանության խթանման գործում՝ պատասխանատու ճանապարհորդներին թիրախավորելու համար:

**Զբոսաշրջության արդյունքի մշակում**

Լոռիում զբոսաշրջային արդյունքի մշակման ռազմավարական գործողությունները պետք է ուղղված լինեն մարզի առաջարկների ընդլայնմանը և դիվերսիֆիկացմանը՝ զբոսաշրջիկների ավելի լայն շրջանակ ներգրավելու համար: Յնարավոր ուղղությունները ամփոփված են ներքևում.

- **Բնահենք զբոսաշրջություն**. մշակել և խթանել բնության վրա հիմնված զբոսաշրջային արդյունք, ինչպիսիք են քայլարշավային արահետները, էկո-օթյակների և ճամբարների հիմնումը և դրանց աջակցումը, վայրի բնության և թռչնադիտարկման էքսկուրսիաների կազմակերպումը և տարածաշրջանի յուրահատուկ բուսական և կենդանական աշխարհը, ինչպիսիք են ջրաշուշանների լիճը և բնության այլ հուշարձաններ:
- **Մշակութային զբոսաշրջություն.** թույլ զարգացած մշակութային վայրերի խթանում, ինչպիսիք են Արամյանցի դղյակը և Միկոյանի թանգարանը, մշակութային փառատոնների և միջոցառումների կազմակերպում, տեղական ավանդույթների և արհեստների վերաբերյալ էքսկուրսիաների կազմակերպում և համայնքային զբոսաշրջության նախաձեռնություններին աջակցություն:
- **Արկածային, բացօթյա և սպորտային զբոսաշրջություն**. արկածային զբոսաշրջության առաջարկների մշակում և խթանում՝ սուր զգացողությունների սիրահար (ադրենալին փնտրող) ճանապարհորդներին գրավելու համար: Սա կարող է ներառել այնպիսի գործողություններ, ինչպիսիք են ռաֆթինգը, ժայռամագլցումը, կիրճերով արշավները, պարապլաներինգը և արտաճանապարհային հեծանվային փաթեթները: Արկածային զբոսաշրջությամբ զբաղվող տուրօպերատորների հետ համագործակցությունը և անվտանգության չափանիշների պահպանման ապահովումը կարևոր նշանակություն կունենան այս առումով:

- **Ագրո և գաստրոզբոսաշրջություն**. խթանել փորձառությունները, որոնք թույլ են տալիս այցելուներին ուսումնասիրել մարզի գյուղատնտեսական փորձը, մասնակցել ֆերմերային գործունեությանը և համտեսել տեղական արտադրանքը: Սա կարող է ներառել ֆերմայում մնալը, պանրի և ուտելի բույսերի հետ կապված էքսկուրսիաները, խոհարարական սեմինարները և այլն:
- **Առողջարարական զբոսաշրջություն**. խթանել առողջարարական զբոսաշրջությունը՝ ընդգծելով Լոռու բնական ռեսուրսները, ինչպիսիք են հանքային աղբյուրները և ջերմային բաղնիքները: Ներգրավել զբոսաշրջիկներին, ովքեր փնտրում են հանգիստ, երիտասարդացում և բուժում:
- **Կայուն զբոսաշրջության կիրառություններ**. ընդգծել կայուն զբոսաշրջության կիրառությունը զբոսաշրջային արդյունքի զարգացման բոլոր նախաձեռնությունների ընթացքում: Սա ներառում է պատասխանատու զբոսաշրջության խթանում, էկոլոգիապես մաքուր կացարանների գործունեության աջակցություն, շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության

նվազեցում և տեղական համայնքների ներգրավում զբոսաշրջության պլանավորման և զարգացման մեջ:
- **Մշակութային փոխանակումներ և տներում հյուրընկալվել (homestay)**. խրախուսել մշակութային փոխանակումները զբոսաշրջիկների և տեղական համայնքների միջև՝ խթանելով տներում հյուրընկալվելը և համայնքային զբոսաշրջության նախաձեռնությունները: Սա այցելուներին տրամադրում է իսկական փորձառություններ և միաժամանակ աջակցում է տեղական կենցաղին ու պահպանում մշակութային ավանդույթները:

**Զբոսաշրջային ուղղության կառավարումը**

Լոռու մարզի զբոսաշրջության զարգացման համար կարևոր է մշակել հետևողական կառավարման և կարգավորման համակարգ, որն ուղղված կլինի զբոսաշրջային արդյունքի կայունության և որակի ապահովմանը: Մարզում ոլորտի զարգացումը չպետք է պարզապես հետևի պահանջարկին, այլ պետք է սկսվի զբոսաշրջության հիմնական ռեսուրսների կայուն կառավարումից (օրինակ՝ բնություն, լանդշաֆտ, մշակույթ): Այն պետք է կապված լինի այցելուի կացության որակի և նրա կողմից արժեքի ընկալման հետ: Զբոսաշրջության քաղաքականության և ռազմավարությունների, ինչպես նաև ոլորտի կառավարման կառույցների առկայությունը (օրինակ՝ Destination Management Organization – DMO) և մշտական մասնավոր, ինչպես նաև պետական-մասնավոր փոխանակումը զբոսաշրջության շահագրգիռ կողմերի միջև (օրինակ՝ երկխոսության հարթակների կամ ֆորմալ/ոչ պաշտոնական ցանցերի միջոցով) միայն որոշ օրինակներ են զբոսաշրջության զարգացման համար: Լոռու, որպես նպատակակետի, ավելի լավ ղեկավարման և կառավարման համար առաջնային են հետևյալ ուղղությունները.

- **Շահագրգիռ կողմերի համագործակցություն և ներգրավվածություն**. մշակել հարթակներ առանցքային շահակիցներին կանոնավոր հաղորդակցության, խորհրդատվության և որոշումների կայացման գործընթացներում ներգրավվելու համար, որպեսզի հնարավոր լինի ապահովել բոլոր շահագրգիռ կողմերի հեռանկարներն ու ներգրավվածությունը՝ ներառյալ պետական մարմինները, տեղական համայնքները, մասնավոր բիզնեսները, ոչ առևտրային կազմակերպությունները և զբոսաշրջության ոլորտի միավորումները: Շահագրգիռ կողմերին ներգրավել նպատակակետի կառավարման գործընթացներում՝ ապահովելով նրանց մասնակցությունը և համամասնակցության պատասխանատվությունը:
- **Լոռու տարածաշրջանի զբոսաշրջության կառավարման գրասենյակ ՅԿ-ի խթանում.** այն պետք է գործի որպես մարմին, որը պատասխանատու է շահագրգիռ կողմերի համակարգման, զարգացման ծրագրերով սահմանված գործողությունների իրականացման և նպատակակետի զարգացման մոնիտորինգի համար, ուստի կարևոր է մշակել և գործարկել մեխանիզմներ՝ դրա կայունության և շարունակական գործունեության համար:
- **Զբոսաշրջության արդյունքի մշակում և զարգացում.** շարունակաբար գնահատել և զարգացնել զբոսաշրջային արդյունքն ու փորձառությունները՝ հիմնվելով շուկայի պահանջարկի, այցելուների նախասիրությունների և մարզի ուժեղ կողմերի վրա: Սա ներառում է զբոսաշրջության առաջարկների դիվերսիֆիկացում, ենթակառուցվածքների բարելավում, ձեռնարկատիրությանն աջակցություն և արդյունքի մշակման մեջ նորարարության և ստեղծագործականության խթանում:
- **Որակի և կայունության ապահովում և չափորոշիչներ**. խրախուսել զբոսաշրջային ձեռնարկություններին ընդունել և պահպանել որակի և կայունության նվազագույն չափորոշիչները՝ բարելավելու այցելուների ընդհանուր փորձառությունը և ապահովելու զբոսաշրջության մրցունակ առաջարկ ամբողջ մարզում:
- **Նպատակակետի հետազոտություն և մոնիտորինգ**. իրականացնել շարունակական հետազոտություն և հավաքել տվյալներ՝ նպատակակետի կատարողականը վերահսկելու, այցելուների գոհունակությունը գնահատելու, տնտեսական ազդեցությունները չափելու և

առաջացող միտումները բացահայտելու համար: Տվյալների վրա հիմնված այս մոտեցումը հնարավորություն է տալիս ճիշտ որոշումներ կայացնել և ապահովել նպատակակետի կառավարման շարունակական բարելավումը:

Զբոսաշրջության ոլորտում մարդկային ռեսուրսների և կարողությունների զարգացումը

Ժամանակակից զբոսաշրջության ոլորտը պահանջում է ապահովել կրթության և վերապատրաստման առաջարկների համապատասխանեցումը ոլորտի մարդկային ռեսուրսների արագ փոփոխվող կարիքներին: Լոռիում մարդկային ռեսուրսների և կարողությունների զարգացման ռազմավարական ուղղությունները պետք է ուղղված լինեն զբոսաշրջության և հյուրընկալության ոլորտում հմտությունների, գիտելիքների և պրոֆեսիոնալիզմի բարձրացմանը: Հնարավոր ուղղություններն են՝

- **Վերապատրաստման և կրթական ծրագրեր**. կարիքների գնահատման հիման վրա զբոսաշրջության ոլորտում ներգրավված անհատների հմտություններն ու գիտելիքները բարձրացնելու համար մշակել հարմարեցված վերապատրաստման ծրագրեր և սեմինարներ:
- **Զբոսաշրջություն և հյուրընկալության կրթություն**. համագործակցել կրթական հաստատությունների հետ և մշակել զբոսաշրջության և հյուրընկալության կրթական ծրագրեր, որոնք հարմարեցված կլինեն մարզում ոլորտի կարիքներին: Նպաստել մասնավոր հատվածի և կրթական հաստատությունների միջև երկխոսությանը և համագործակցությանը՝ ավելի գործնական դասընթացների և կրթության ապահովման համար:
- **Ձեռնարկատիրության աջակցություն**. ներգրավել աջակցության ծրագրեր և ռեսուրսներ ձեռնարկատերերի համար, ովքեր հետաքրքրված են զբոսաշրջության ոլորտում բիզնես սկսելով: Ուղղորդել բիզնեսի պլանավորման, մարքեթինգի, ֆինանսական կառավարման և ֆինանսավորման գործընթացները և խրախուսել զբոսաշրջության ոլորտում փոքր և միջին ձեռնարկությունների աճը:
- **Մասնագիտական հավաստագրում**. խրախուսել զբոսաշրջության ոլորտում ներգրավված անձանց ստանալ մասնագիտական հավաստագրեր, որպեսզի բարձրացնեն իրենց վստահությունը և հարստացնեն իրենց փորձը: Խթանել ճանաչված սերտիֆիկացման ծրագրերին մասնակցությունը, որոնք կապված են զբոսաշրջության հատուկ դերերի հետ, ինչպիսիք են զբոսավարությունը, հյուրանոցների կառավարումը կամ կայուն զբոսաշրջության կիրառությունները և այլն:
- **Մենթորության ծրագրեր**. խթանել և հիմնել մենթորության ծրագրեր, որտեղ փորձառու մասնագետները կարող են ուղղորդել և աջակցել զբոսաշրջության ոլորտում սկսնակներին: Այս ծրագրերն օգնում են փոխանցել գիտելիքները, խթանել կարիերայի աճը և ձևավորել ներոլորտային ցանց:

Զբոսաշրջային ենթակառուցվածք և տրանսպորտ

Լոռու զբոսաշրջային ենթակառուցվածքների և տրանսպորտի ռազմավարական ուղղությունները պետք է նպատակաուղղված լինեն հասանելիության և տրանսպորտային ցանցերի բարելավմանը, զբոսաշրջային ենթակառուցվածքի զարգացմանը: Որոշ միջնաժամկետ և երկարաժամկետ ռազմավարական ուղղությունները ներկայացված են ստորև՝

- **Պետություն-մասնավոր համագործակցություն**. զբոսաշրջության ոլորտում ենթակառուցվածքների զարգացման նպատակով խթանել պետական և մասնավոր հատվածների միջև համագործակցությունը: Ենթակառուցվածքային նախագծեր իրականացնելու նպատակով պետական կառույցների, զբոսաշրջության ոլորտի շահագրգիռ

կողմերի և տեղական համայնքների միջև խրախուսել համագործակցությունը և համախմբել ռեսուրսները, փորձն ու ներդրումները:

- **Ճանապարհային ենթակառուցվածք**. Լոռու մարզ և դրա ներսում հասանելիությունը բարելավելու համար համապատասխան մարմինների հետ աշխատանքներ իրականացնել ճանապարհային ցանցերի զարգացման և պահպանման գործում: Սա ներառում է գոյություն ունեցող ճանապարհների արդիականացում, նոր երթուղիների կառուցում և լավ պահպանված ու անվտանգ տրանսպորտային կապերի ապահովում դեպի հայտնի զբոսաշրջային այցելավայրեր:
- **Ցուցանակների տեղադրում և տեղորոշում**. բարելավել ցուցանակների և ճանապարհներով կողմնորոշվելու համակարգերը ամբողջ մարզում: Զբոսաշրջային հիմնական վայրերում, տրանսպորտային հանգույցներում և հիմնական ճանապարհների երկայնքով հստակ տեսանելի տեղեկատվական ցուցանակները կբարձրացնեն այցելուների փորձառությունը և կնվազեցնեն կողմնորոշվելու հետ կապված դժվարությունները:

**Զբոսաշրջության ոլորտում որակի և կայունության կառավարում**

Լոռիում զբոսաշրջության որակի և կայունության կառավարման ռազմավարական ուղղությունները պետք է կենտրոնանան այցելուների բարձրորակ փորձառությունների ապահովման վրա և միաժամանակ պահպանեն մարզի բնական և մշակութային ժառանգությունը հետևյալ կերպ.

- **Ծառայությունների ստանդարտներ և հավաստագրեր**. Լոռու Մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի, Լոռու տարածաշրջանի զբոսաշրջության կառավարման գրասենյակ ՀԿ-ի, ինչպես նաև մասնավոր հատվածի կողմից ծառայությունների նվազագույն որակի հստակ ստանդարտների և հավաստագրերի համատեղ սահմանում՝ տարբեր զբոսաշրջային հաստատություններում սպասարկման հետևողականությունն ու գերազանցությունն ապահովելու համար: Ձեռնարկությունների խրախուսումը, որպեսզի հավատարիմ մնան այս չափանիշներին, ինչը կբարձրացնի ծառայությունների ընդհանուր որակը նպատակակետում:
- **Հետադարձ կապ և շարունակական բարելավում**. այցելուների կարծիքները գրանցելու և այն մշակելու ու օգտագործելու համար մեխանիզմների ստեղծումը շարունակական բարելավում կապահովի ինչպես առանձին հաստատությունների, այնպես էլ՝ ամբողջ մարզի մակարդակով: Թեև անհատական ձեռնարկությունները շարունակական բարելավումների ուղղված միջոցառումներ կիրականացնեն՝ հիմնվելով իրենց հյուրերի կարծիքի վրա, Լոռու տարածաշրջանի զբոսաշրջության կառավարման գրասենյակ ՀԿ-ն պատասխանատու է տարածաշրջանի մակարդակով հետադարձ կապի ապահովման, կարծիքների հավաքագրման, վերլուծության և փոխանակման համար, ինչպես նաև՝ նրանց մտահոգությունները անհապաղ լուծելու և որակյալ սպասարկման հանձնառություն ցուցաբերելու համար:
- **Կայուն զբոսաշրջության պրակտիկա**. խթանել և կիրառել կայուն զբոսաշրջային փորձառությունները ամբողջ նպատակակետում: Սա ներառում է շրջակա միջավայրի վրա ազդեցության նվազեցումը, բնական ռեսուրսների պահպանումը, տեղական համայնքներին աջակցելը և մշակութային ժառանգության պահպանումը:
- **Կրթություն և իրազեկում.** մշակել կրթական ծրագրեր և նախաձեռնություններ՝ կայուն զբոսաշրջության փորձառությունների, տեղական մշակույթի և շրջակա միջավայրի պահպանման մասին բնակչության և այցելուների իրազեկվածության աստիճանը բարձրացնելու համար: Խրախուսել պատասխանատու վարքագիծը, օրինակ՝ նվազագույնի հասցնել թափոնները, հարգել տեղական սովորույթները և աջակցել տեղական տնտեսություններին:
- **Ամբողջ նպատակակետի կայունության քաղաքականություն**. խթանել ողջ նպատակակետի կայունության քաղաքականությունը և ուղենիշները՝ ապահովելու

կայունության փորձառություններ զբոսաշրջության ոլորտում թափոնների կառավարման, էներգաարդյունավետության, ջրի պահպանման, բնական և մշակութային ժառանգության վայրերի պաշտպանության վերաբերյալ:

- **Բնական և մշակութային ժառանգության պահպանում**. մշակել ռազմավարություններ և նախաձեռնություններ մարզի բնական և մշակութային ժառանգությունը պաշտպանելու և պահպանելու համար: Օրինակ՝ զգայուն տարածքների համար պատասխանատու զբոսաշրջության ուղեցույցների մշակում ՀԿ-ների և փորձագետների հետ համագործակցությամբ:
- **Մոնիտորինգ և գնահատում.** մոնիտորինգի և գնահատման համակարգերի ստեղծում՝ կայունության կառավարման փորձառությունների արդյունավետությունը գնահատելու համար: Պարբերաբար գնահատել հիմնական կատարողականի ցուցանիշները, որոնք կապված են զբոսաշրջության բնապահպանական, սոցիալական և տնտեսական ազդեցությունների հետ: Բացահայտել բարելավման ենթակա ոլորտները և ժամանակի ընթացքում հետևել առաջընթացին:

**Զբոսաշրջության այլ շրջանակներ**

Տարածաշրջանում զբոսաշրջության զարգացման գործունեության արդյունավետությունն ու կայունությունը բարձրացնելու համար առանձնացվել են որոշ դրույթներ՝

- **Շահագրգիռ կողմերի ներգրավում և համագործակցություն.** պարբերաբար թարմացնել շահագրգիռ կողմերի տեղեկությունները՝ զբոսաշրջության ոլորտին առընչվող ընթացիկ և ապագա ծրագրերի վերաբերյալ: Կապ հաստատել միջազգային դոնորների, ծրագրերի համակարգողների և տարածաշրջանում զբոսաշրջային նախագծերում ներգրավված համապատասխան կազմակերպությունների հետ, նախաձեռնել քննարկումներ և ուսումնասիրել համագործակցության, գիտելիքների փոխանակման և համակարգման հնարավորությունները՝ առավելագույնի հասցնելու համար հավաքական ջանքերի ազդեցությունը զբոսաշրջային անուղղակի խնդիրների լուծման վրա: Այս խնդիրները կարող են վերաբերել մեքենաների և հեծանիվների վարձույթին, էլեկտրոնային լիցքավորման կայանների հասանելիությանը, բանկոմատների առկայությանը, պատշաճ առողջապահությանը, շտապ օգնության ապահովմանը և այլն:
- Կապերի ստեղծում և տեղեկատվության փոխանակում. մասնակցել զբոսաշրջային ֆորումներին, կոնֆերանսներին և աշխատաժողովներին, որոնք համախմբում են միջազգային դոնորներին, զբոսաշրջության փորձագետներին և շահագրգիռ կողմերին: Ներգրավվել կապեր ստեղծելու գործունեության մեջ՝ խթանելու հարաբերությունների զարգացումը, տեղեկատվության փոխանակումը և համագործակցության հնարավոր ոլորտների բացահայտումը:

## 2. ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ ԿԱՅՈՒՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ

**Կարճաժամկետ գործողությունների կարիք՝ 2024-2025**
**Մեկնարկային ժամկետ՝ անմիջապես**

| Գործողության ոլորտը | Կայուն զբոսաշրջության զարգացման համար հիմնական գործողություն | Ռազմավարական նպատակ |
|---|---|---|
| 1. Նպատակակետի կառավարում | 1.1. Լոռու մարզում մինչև 2027թ. կայուն զբոսաշրջության զարգացման ճանապարհային քարտեզի բովանդակության շարունակական ադապտացում, թարմացում և գործողությունների իրականացման դիտարկում (կիրառելի աշխատանքային փաստաթուղթ) | 1, 2, 3, 4, 5, 6 |
| | 1.2. Լոռու DMO-ի շարունակական ինստիտուցիոնալ զարգացում՝ ապահովելու դրա երկարաժամկետ գոյությունը, ֆինանսական կայունությունը և արդյունավետ ներդրումը զբոսաշրջության պլանավորման, կառավարման և շուկայավարման գործում | 6 |
| 2. Զբոսաշրջության ոլորտի վերլուծություն և վիճակագրություն | 2.1. Կանոնավոր կերպով զբոսաշրջային ծառայություններ մատակարարներից վիճակագրական տվյալների հավաքում | 6 |
| 3. Զբոսաշրջության ոլորտում մարդկային ռեսուրսների և կարողությունների զարգացում | 3.1. Թիրախային խմբերի վրա հիմնված վերապատրաստման ծրագրերի տրամադրում (օրինակ՝ բնության և մշակութային էքսկուրսիաների իրականցում, տեղական/առողջ/կայուն/ստեղծագործական խոհանոց, առաջին օգնություն, անվտանգություն և փրկարարական գործընթացների կառավարում) | 1, 2, 3, 5 |
| 4. Զբոսաշրջային արդյունքի մշակում և թիրախային խմբեր | 4.1. Լոռու մարզի համար նախընտրելի և առավել խելամիտ (ներքին և միջազգային) թիրախային հաճախորդների սեգմենտների որոշում | 1, 2, 5 |
| | 4.2. Առկա զբոսաշրջային առաջարկների գնահատում և շուկայում առկա թերությունների բացահայտում, հաճախորդների որոշակի հատվածներին նոր ապրանքներ կամ փորձառություններ ներկայացնելու համար | 1, 2, 5 |
| | 4.3. Աջակցություն տեղական զբոսաշրջային ծառայություններ մատուցողներին՝ զարգացնելու նոր, մրցունակ և թիրախային խմբերին ուղղված զբոսաշրջային արդյունք (օրինակ՝ գաստրո փառատոն, համերգներ, համատեղ աշխատանքային տարածքներ, գլեմփինգ) գոյություն ունեցող զբոսաշրջային առաջարկի շուրջ | 3, 5 |

| Գործողության ոլորտը | Կայուն զբոսաշրջության զարգացման համար հիմնական գործողություն | Ռազմավարական նպատակ |
|---|---|---|
| | 4.4. Զբոսաշրջության ոլորտի դերակատարների միջև տեղական ապրանքների և ծառայությունների կայուն գնումների խթանում | 2, 3, 5, 6 |
| 5. Նպատակակետի մարքեթինգ և բրենդինգ | 5.1. Լոռու նպատակակետի կայքի հետագա զարգացում ու պահպանում տեղեկատվական և տեսողական գրավիչ կայքէջի միջոցով, ինչպես նաև ակտիվ սոցիալական մեդիայի պրոֆիլների պահպանում պոտենցիալ ճանապարհորդների հետ շփվելու և նպատակակետի մասին արդիական տեղեկատվություն տրամադրելու համար | 1, 2, 5 |
| 6. Զբոսաշրջային ենթակառուցվածքներ և տրանսպորտ | 6.1. Համագործակցություն Լոռու մարզպետի աշխատակազմի և տեղական ինքնակառավարման մարմինների միջև՝ նպատակային համայնքներում զբոսաշրջային ենթակառուցվածքների ստեղծման պետական սուբսիդավորումն ու ֆինանսավորումը ապահովելու նպատակով. | 4, 6 |
| | 6.2. Մարզային հասարակական տրանսպորտի ժամանակացույցի թարմացում և հրապարակում travellori.com կայքում և այլ համապատասխան վեբ էջերում | 4 |

## Կարճաժամկետ գործողությունների և մոնիթորինգի պլան

| Ժամկետ, թարմացում/ վերանայում | Հիմնական գործողություն | Նախնական միջցառում | Մասնակից շահագրգիռ կողմեր | Մոնիթորինգի չափանիշներ |
|---|---|---|---|---|
| 2024թ. առաջին եռամսյակ | 1.1. Լոռու մարզում մինչև 2027թ. կայուն զբոսաշրջության զարգացման ճանապարհային քարտեզի բովանդակության շարունակական ադապտացում, թարմացում և գործողությունների իրականացման դիտարկում (կիրառելի աշխատանքային փաստաթուղթ) | - Մշակել ճանապարհային քարտեզի գործողությունների վրա հիմնված աշխատանքային պլան մարզի բոլոր համայնքների և մարզի ձևավորված կլաստերների համար՝ հաշվի առնելով բոլոր գործող դոնոր և միջազգային ծրագրերը,<br>- Հետագա հիմնական գործողությունների իրականացման երկարաժամկետ նախապատրաստում (մեծ պատկերի մշտական դիտարկում) | Լոռու մարզպետի աշխատակազմ, Լոռի DMO | Ժամանակակից և թարմացված ճանապարհային քարտեզ<br><br>Աշխատանքային պլան<br><br>Արդյունքները, մարտահրավերները և բարելավման ոլորտները բացահայտելու նպատակով զբոսաշրջության կառավարման ռազմավարությունների կատարողականի և ազդեցության պարբերաբար գնահատում |
| 2024թ. երկրորդ եռամսյակ | 1.2. Լոռու DMO-ի շարունակական ինստիտուցիոնալ զարգացում՝ ապահովելու նրա երկարաժամկետ գոյությունը, ֆինանսական կայունությունը և արդյունավետ ներդրումը զբոսաշրջության պլանավորման, կառավարման և շուկայավարման գործում: | - Սահմանել ապագա պատասխանատվության ոլորտները և հիմնական գործողությունները (DMO-ի և այլ շահագրգիռ կողմերի միջև պատասխանատվության բաշխում)<br>- Որոշել անձնակազմի պարտականությունները DMO-ում և ձեռք բերել օժանդակ անձնակազմ (ուսանողներ, կամավորներ, պրակտիկանտներ)<br>- Սահմանել ֆինանսավորման աղբյուրները և եկամուտների աղբյուրները<br>- Որոշել անդամության և նրանց ձեռքբերման (ներգրավման) կառուցվածքը<br>- Անդամության շրջանակներում ստեղծել թեմատիկ | Լոռի DMO, զբոսաշրջության ոլորտի ծառայությունների մատակարարներ, զբոսաշրջության շահագրգիռ կողմեր | Լոռու DMO-ի առաջնորդական դեր Լոռու մարզի զբոսաշրջության զարգացման գործում<br><br>Լոռու DMO-ի անդամակցություն ունեցող մասնավոր հատվածի զբոսաշրջային բիզնեսների ավելացված քանակ |

| Ժամկետ, թարմացում/ վերանայում | Հիմնական գործողություն | Նախնական միջացառում | Մասնակից շահագրգիռ կողմեր | Մոնիթորինգի չափանիշներ |
|---|---|---|---|---|
| | | աշխատանքային խմբեր՝ ճանապարհային քարտեզի հիմնական գործողություններն իրականացնելու համար | | |
| 2024թ. չորրորդ եռամսյակ | 2.1. Կանոնավոր կերպով զբոսաշրջային ծառայություններ մատակարարներից վիճակագրական տվյալների հավաքում | Տվյալների հավաքման գործընթացների և ձևանմուշների մշակում և իրականացում | Լոռի DMO, կացարանային ծառայությունների մատուցողներ | Տվյալների հավաքման ձևանմուշներ<br>Հուսալի տվյալների առկայություն |
| 2024թ. երկրորդ եռամսյակ | 3.1. Հատուկ, մրցակցությանը համապատասխան թեմաներով հարմարեցված և թիրախային խմբերի վրա հիմնված վերապատրաստման ծրագրերի տրամադրում (օրինակ՝ բնության և մշակութային էքսկուրսիաներ, տեղական/ առողջ/ կայուն/ ստեղծագործական խոհանոց, առաջին օգնություն, անվտանգություն և փրկարարական գործընթացների կառավարում) | - Հստակեցնել ֆինանսավորման տարբերակները և դասընթացները իրականացնող գործընկերներին<br>- Առանձնահատուկ դասընթացների կարիքների վերհանման նպատակով շահառուների հետ խորհրդատվությունների իրականացում | Լոռու մարզպետի աշխատակազմ, Լոռի DMO, կրթական հաստատություններ (միջին-մասնագիտական և մասնավոր կրթական կենտրոններ), դոնորներ, միջազգային ծրագրեր | Զբոսաշրջության ոլորտի հմուտ ծառայություններ տրամադրողների և շահակիցների (պետական և մասնավոր) ավելացված թվաքանակ<br><br>Զբոսաշրջության ոլորտի մատակարարների բարելավված ծառայությունների որակ և կայունության կատարողական<br><br>Դիվերսիֆիկացված զբոսաշրջային արդյունքի տեսականի և նոր մշակված զբոսաշրջային արդյունք |
| 2024թ. երկրորդ եռամսյակ | 4.1. Լոռու մարզի համար նախընտրելի և առավել խելամիտ (ներքին և միջազգային) թիրախային հաճախորդների սեգմենտների որոշում | - Ճանապարհային քարտեզի մշակման քննարկումների արդյունքների և առաջարկների հիման վրա թիրախային խմբերի սահմանում<br>- Զբոսաշրջության ոլորտի դերակատարների միջև թիրախային խմբերի շրջանառում՝ որպես ուղեցույց թիրախի վրա հիմնված պրոդուկտների ստեղծման | Լոռու մարզպետի աշխատակազմ, Լոռի DMO, զբոսաշրջության ոլորտի ծառայությունների | Զբոսաշրջիկների հստակ սեգմենտների նկարագրի առկայություն |

| Ժամկետ, թարմացում/ վերանայում | Հիմնական գործողություն | Նախնական միջացառում | Մասնակից շահագրգիռ կողմեր | Մոնիթորինգի չափանիշներ |
|---|---|---|---|---|
| | | համար: | մատակարարներ | |
| 2024թ. երկրորդ եռամսյակ | 4.2. Առկա զբոսաշրջային առաջարկների գնահատում և շուկայում առկա բացերի բացահայտում, հաճախորդների որոշակի հատվածներին նոր ապրանքներ կամ փորձառություններ ներկայացնելու համար | - Ճանապարհային քարտեզի մշակման քննարկումների արդյունքների և առաջարկների հիման վրա թույլ կողմերի և մարզում զբոսաշրջային արդյունքի զարգացման հնարավորությունների սահմանում որպես մրցունակ արդյունքի մշակման ուղեցույցներ | Լոռու մարզպետի աշխատակազմ, Լոռի DMO, զբոսաշրջության ոլորտի ծառայությունների մատակարարներ | Զբոսաշրջային արդյունքի բացերի և կարիքների գնահատման առկայություն (սահմանված այցելուների սեգմենտների հիման վրա) |
| 2024թ.չորրորդ եռամսյակ | 4.3. Աջակցություն տեղական զբոսաշրջության մատակարարներին՝ զարգացնելու նոր, մրցունակ և թիրախային խմբերին ուղղված զբոսաշրջային արդյունք (օրինակ՝ գաստրո փառատոն, համերգներ, համատեղ աշխատանքային տարածքներ, գլեմփինգ) գոյություն ունեցող զբոսաշրջային առաջարկի շուրջ: | - Զբոսաշրջության ոլորտի և հատուկ ծառայությունների (օր.՝ բնության, մշակութային տուրիզմ) մատակարարների կապերի զարգացմանն աջակցումը՝ ինքնուրույն մշակելու նոր գաղափարներ կամ մշակել նոր զբոսաշրջային արդյունք<br>- Տուրօպերատորներին խրախուսել մշակել ավելի շատ (միջսահմանային) տուրիստական փաթեթներ ներքին և տարածաշրջանային շուկայի համար: | Լոռու մարզպետի աշխատակազմ, Լոռի DMO, զբոսաշրջության ոլորտի ծառայությունների մատակարարներ, ծառայությունների և ապրանքների այլ մատակարարներ | - Զբոսաշրջիկների / այցելուների ավելացված թվաքանակ<br>- Զբոսաշրջիկների այցի միջին տևողության ավելացում<br>- Զբոսաշրջության արժեքային շղթայում ինտեգրված զբոսաշրջության մատակարարների ավելացված քանակ<br>- Զբոսաշրջության մատակարարների համար աշխատող ավելացված անձնակազմ |
| 2024թ.երրորդ եռամսյակ | 4.4. Զբոսաշրջության ոլորտի դերակատարների միջև | Լոռու մարզում ապրանքների և ծառայությունների մատակարարների ցանկի տրամադրում, որոնք կարող են համարվել զբոսաշրջության ոլորտի մատակարարներ՝ | Լոռու մարզպետի աշխատակազմ, Լոռի DMO, | - Զբոսաշրջությանը վերաբերող ապրանքներ և ծառայություններ |

| Ժամկետ, թարմացում/ վերանայում | Հիմնական գործողություն | Նախնական միջացառում | Մասնակից շահագրգիռ կողմեր | Մոնիթորինգի չափանիշներ |
|---|---|---|---|---|
| | տեղական ապրանքների և ծառայությունների կայուն գնումների խթանում | նպատակ ունենալով ուժեղացնել զբոսաշրջության տնտեսական ազդեցությունը. | զբոսաշրջության ոլորտի ծառայությունների մատակարարներ | մատուցող մատակարարների ավելացված անձնակազմ<br>- Զբոսաշրջության ոլորտի շահառուների (պետական և մասնավոր) և ծառայությունների մատակարարների միջև խթանված կապեր և համագործակցություն |
| 2024թ. երկրորդ եռամսյակ | 5.1. Լոռու նպատակակետի կայքի հետագա զարգացում ու պահպանում տեղեկատվական և գրավիչ կայքէջի միջոցով, ինչպես նաև ակտիվ սոցիալական մեդիայի պրոֆիլներ պոտենցիալ ճանապարհորդների հետ շփվելու և նպատակակետի մասին արդի տեղեկատվություն տրամադրելու համար: | - Լոռու նպատակակետի վեբկայքում առկա բացերի քննադատական ուսումնասիրություն<br><br>- Կայքի նոր բովանդակության մշակում կամ առկա բովանդակության բարելավում և վաբկայքին ինտեգրում | Լոռի DMO | Ժամանակակից և թարմացված վեբկայք և սոցիալական մեդիայի բովանդակություն |
| 2025թ. առաջին եռամսյակ | 6.1. Համագործակցություն Լոռու մարզպետի աշխատակազմի և տեղական ինքնակառավարման մարմինների միջև՝ նպատակային համայնքներում զբոսաշրջային ենթակառուցվածքների ստեղծման պետական սուբսիդավորումն ու ֆինանսավորումը ապահովելու նպատակով.<br>պետական, համայնքային, | - Ստեղծել համապատասխան, կանոնավոր փոխանակման ձևաչափ մարզպետին կից ՀԿ-ների, Տուրիզմի զարգացման հանձնաժողովի և Լոռու DMO-ի միջև զբոսաշրջային ենթակառուցվածքների կարիքները և այլ հարցերը ու զարգացման առաջնային հնարավոր միջոցառումների քննարկելու համար:<br>- Զբոսաշրջության հիմնական ուղղություններում և ավելի մեծ քաղաքներում տեղեկատվական վահանակների և ցուցանակների տեղադրում:<br>- Տեղեկատվական կենտրոնների ստեղծում | Լոռու մարզպետի աշխատակազմ, ՏԻՄ-եր | Թիրախային համայնքներում զբոսաշրջային ենթակառույցների նախագծերի ավելացված քանակ<br><br>Թիրախային համայնքներում ենթակառուցվածքային ծրագրերի համար հատկացված միջոցներ |

| Ժամկետ, թարմացում/ վերանայում | Հիմնական գործողություն | Նախնական միջացառում | Մասնակից շահագրգիռ կողմեր | Մոնիթորինգի չափանիշներ |
|---|---|---|---|---|
| | մասնավոր և հանրային սեգմենտի համագործակցություն | յուրաքանչյուր վայրում, որոնց վարձատրության միջոցները տրամադրվում են ՏԻՄ-երի կողմից: | | |
| 2024թ. երկրորդ եռամսյակ | 6.2. Մարզային հասարակական տրանսպորտի ժամանակացույցի թարմացում և հրապարակում travellori.com կայքում կամ այլ համապատասխան վեբ էջերում | Այցելուների համար տրանսպորտի վերաբերյալ արդի առցանց տեղեկատվություն ապահովելու նպատակով հարմար մեխանիզմի սահմանում | Լոռու մարզպետի աշխատակազմ, ՏԻՄ-եր, Լոռու DMO | Կայքում տեղադրված մարզային հասարակական տրանսպորտի չվացուցակ |

## Միջնաժամկետ գործողությունների կարիք՝ 2025-2027

| Գործողության ոլորտը | Կայուն զբոսաշրջության զարգացման համար հիմնական գործողություն | Ռազմավարական նպատակ |
|---|---|---|
| 1. Զբոսաշրջության որակի և կայունության կառավարում | 1.1. Զբոսաշրջության մատակարարների որակի և կայունության վերանայում ու որակի և կայունության նվազագույն չափորոշիչների նոր փաթեթի մշակում կամ առկա ստանդարտների բարելավում | 1, 2 ,5 |
| | 1.2. Անվտանգության և փրկարարական գործող ստանդարտների վերանայում և բարելավված կամ նոր չափորոշիչների մշակում | 2, 4 |
| | 1.3. Ազգային կամ միջազգային որակի և / կամ կայունության պիտակ / հավաստագիր ստանալու գործընթացում զբոսաշրջային ծառայությունների մատակարարներին աջակցություն | 1, 2, 5, 6 |
| | 1.4. Այցելուների համար պատշաճ (առցանց և օֆլայն) տեղեկատվական ծառայությունների և նյութերի մշակման խթանում, ներառյալ անհատական ճանապարհորդների համար թեմատիկ երթուղիների վերաբերյալ առաջարկություններ (օրինակ՝ գրացուցակ, ուղեցույց, ապրանքների բրոշյուրներ, քարտեզներ) | 5 |
| 2. Նպատակակետի կառավարում | 2.1. Նպատակակետում պատասխանատու զբոսաշրջային պրակտիկա, այցելուների անվտանգություն և արդար բիզնես պրակտիկա ապահովելու համար զբոսաշրջությանն առնչվող կանոնակարգերի, քաղաքականությունների և ուղեցույցների ձևակերպում և իրականացում: | 1, 2, 3, 4, 5, 6 |
| | 2.2. Կայուն զբոսաշրջության փորձառությունների իրականացում շրջակա միջավայրի, վայրի բնության և բնական ռեսուրսների վրա զբոսաշրջության բացասական ազդեցությունը նվազագույնի հասցնելու համար | 2, 5 |
| | 2.3. Տեղական համայնքների իրավունքներն ու ցանկությունները հարգելով նպատակակետի մշակութային ժառանգության, ավանդույթների և իրական փորձառությունների պահպանման և խթանմանն ուղղված միջոցառումների իրականացում | 1, 5 |
| 3. Զբոսաշրջության ոլորտի վերլուծություն և վիճակագրություն | 3.1. Լոռու մարզի այցելուների հարցումների պարբերական իրականացում | 1, 2, 4, 5 |
| | 3.2. Լոռու մարզի հյուրընկալության և զբաղվածության վերաբերյալ հարցումների պարբերական իրականացում | 1, 2, 4, 5, 6 |
| 4. Նպատակակետի մարքեթինգ և բրենդինգ | 4.1. Լոռու մարզի մարքեթինգի և բրենդինգի քաղաքականության մշակում | 1, 2, 5 |
| | 4.2. Լոռու մարզում արտադրված ապրանքների (որակի և կայունության չափորոշիչների վրա հիմնված) մարզային բրենդի մշակում | 3, 5, 6 |
| | 4.3. Նպատակակետի տեսանելիությունը բարձրացնելու և պոտենցիալ (ներքին և միջազգային) այցելուներ ներգրավելու նպատակով տարբեր հարթակներում (ներառյալ տպագիր, թվային և սոցիալական) թիրախային խմբերի | 5 |

| Գործողության ոլորտը | Կայուն զբոսաշրջության զարգացման համար հիմնական գործողություն | Ռազմավարական նպատակ |
|---|---|---|
| | վրա հիմնված գովազդային արշավների մեկնարկ | |
| | 4.4. Ներգրավել ԶԼՄ-ներին և ազդեցիկ անձանց (influencer) դրական լուսաբանում ապահովելու համար, այդպիսով բարձրացնել նպատակակետի համբավն ու վստահելիությունը | 1, 2, 5 |
| 5. Զբոսաշրջության ոլորտում մարդկային ռեսուրսների և կարողությունների զարգացում | 5.1. Անգլերենի հիմնական և խորացված հմտությունների վերաբերյալ հարմարեցված և թիրախային խմբերի վրա հիմնված վերապատրաստման ծրագրեր | 3, 5 |
| | 5.2. Զբոսաշրջային ծառայությունների մատակարարներին առցանց ներկայությունն ապահովելու (օրինակ՝ սեփական վեբ կայքի, Tripadvisor-ի, Facebook-ի, Instagram-ի և այլնի ստեղծում) և առցանց վաճառքի հարթակների (օրինակ՝ booking.com, airbnb) օգտագործման աջակցություն | 3, 5 |
| | 5.3. Զբոսաշրջության մատակարարների սպասարկման որակի և կայունության կատարողականի բարելավման և նվազագույն չափորոշիչների համապատասխանությունը ապահովմելու համար հարմարեցված և թիրախային խմբերի վրա հիմնված վերապատրաստման ծրագրերի տրամադրում | 1, 2, 3, 5 |

## Միջնաժամկետ գործողությունների և մոնիթորինգի պլան

| Ժամկետ | Հիմնական գործողություն | Նախնական միջոցառում | Մասնակից շահագրգիռ կողմեր | Մոնիթորինգի չափանիշներ |
|---|---|---|---|---|
| 2026թ. | 1.1. Զբոսաշրջության մատակարարների որակի և կայունության վերանայում ու որակի և կայունության նվազագույն չափորոշիչների նոր փաթեթի մշակում կամ առկա ստանդարտների բարելավում | Հաշվի առնել առաջնահերթությունները, ինչպես նաև ֆինանսական և կադրային շրջանակային պայմանները: Հիմնական գործունեության մեկնարկում սահմանել առաջնային միջոցառումները | Լոռի DMO, զբոսաշրջության ոլորտի ծառայությունների մատակարարներ, պետական մարմիններ | Զբոսաշրջության մատակարարների բարելավված սպասարկման որակ և կայունություն |
| 2025թ. | 1.2. Անվտանգության և փրկարարական գործող ստանդարտների վերանայում և բարելավված կամ նոր չափորոշիչների մշակում | | Լոռի DMO, զբոսաշրջության ոլորտի ծառայությունների մատակարարներ, պետական մարմիններ | Զբոսաշրջության մատակարարների բարելավված սպասարկման որակ և կայունություն |
| 2025թ. | 1.3. Ազգային կամ միջազգային որակի և / կամ կայունության պիտակ / հավաստագիր ստանալու գործընթացում զբոսաշրջային ծառայությունների մատակարարներին աջակցություն | | Լոռու մարզպետի աշխատակազմ, Զբոսաշրջության ոլորտի մատակարարներ | Զբոսաշրջության մատակարարների բարելավված սպասարկման որակ և կայունություն |
| 2025թ. | 1.4. Այցելուների համար պատշաճ (առցանց և օֆլայն) տեղեկատվական ծառայությունների և նյութերի մշակման խթանում, ներառյալ անհատական ճանապարհորդների համար թեմատիկ երթուղիների վերաբերյալ առաջարկություններ (օրինակ՝ գրացուցակ, ուղեցույց, ապրանքների | | Լոռի DMO | Զբոսաշրջիկների / այցելուների ավելացված թվաքանակ<br>Զբոսաշրջիկների / այցելուների ժամանման տևողությնա ավելի երկար ժամկետներ<br>Զբոսաշրջության մատակարարների բարելավված սպասարկման որակ և կայունություն |

| Ժամկետ | Հիմնական գործողություն | Նախնական միջոցառում | Մասնակից շահագրգիռ կողմեր | Մոնիթորինգի չափանիշներ |
|---|---|---|---|---|
| | բրոշյուրներ, քարտեզներ) | | | |
| | 2.1. Նպատակակետում պատասխանատու զբոսաշրջային պրակտիկա, այցելուների անվտանգություն և արդար բիզնես պրակտիկա ապահովելու համար զբոսաշրջությանն առնչվող կանոնակարգերի, քաղաքականությունների և ուղեցույցների ձևակերպում և իրականացում: | | Լոռու մարզպետի աշխատակազմ, Լոռի DMO, զբոսաշրջության ոլորտի ծառայությունների մատակարարներ, պետական մարմիններ | Նպատակակետի պրոֆեսիոնալ կառավարման շրջանակի առկայություն |
| 2026թ. | 2.2. Կայուն զբոսաշրջության փորձառությունների իրականացում շրջակա միջավայրի, վայրի բնության և բնական ռեսուրսների վրա զբոսաշրջության բացասական ազդեցությունը նվազագույնի հասցնելու համար | | Լոռու մարզպետի աշխատակազմ, Զբոսաշրջության ոլորտի մատակարարներ | Բնապահպանական և բնական սպառնալիքները նվազեցնելու համար արդյունավետ միջոցների առկայություն |
| 2025թ. | 2.3. Տեղական համայնքների իրավունքներն ու ցանկությունները հարգելով նպատակակետի մշակութային ժառանգության, ավանդույթների և իրական փորձառությունների պահպանման և խթանման ուղղված միջոցառումների իրականացում | | Լոռու մարզպետի աշխատակազմ, ՏԻՄ, Զբոսաշրջության ոլորտի մատակարարներ | Սոցիալ-մշակութային սպառնալիքները նվազեցնելու համար արդյունավետ միջոցների առկայություն |

| Ժամկետ | Հիմնական գործողություն | Նախնական միջոցառում | Մասնակից շահագրգիռ կողմեր | Մոնիթորինգի չափանիշներ |
|---|---|---|---|---|
| 2025թ. | 3.1. Լոռու մարզի այցելուների հարցումների պարբերական իրականացում | | Լոռի DMO, զբոսաշրջության ոլորտի ծառայությունների մատակարարներ, պետական մարմիններ | Զբոսաշրջության մատակարարների բարելավված սպասարկման որակ և կայունություն |
| | 3.2. Լոռու մարզի հյուրընկալության և զբաղվածության վերաբերյալ հարցումների պարբերական իրականացում | | Լոռի DMO, զբոսաշրջության ոլորտի ծառայությունների մատակարարներ, պետական մարմիններ | Հարցման արդյունքների առկայություն |
| 2025թ. | 4.1. Լոռու մարզի մարքեթինգի և բրենդինգի քաղաքականության մշակում | | Լոռու մարզպետի աշխատակազմ, Լոռի DMO, զբոսաշրջության ոլորտի ծառայությունների մատակարարներ | Զբոսաշրջիկների / այցելուների ավելացված թվաքանակ<br>Զբոսաշրջիկների այցի միջին տևողության աճ<br>Զբոսաշրջության ոլորտի շահագրգիռ կողմերի (պետական և մասնավոր) և ծառայությունների մատակարարների միջև խթանված կապեր և համագործակցություն |
| 2025թ. | 4.2. Լոռու մարզում արտադրված ապրանքների (որակի և կայունության չափորոշիչների վրա հիմնված) մարզային բրենդի մշակում | | Լոռի DMO, զբոսաշրջության ոլորտի ծառայությունների մատակարարներ, ծառայությունների և ապրանքների այլ մատակարարներ | Զբոսաշրջության արժեքային շղթայում ինտեգրված զբոսաշրջության մատակարարների ավելացված քանակ<br><br>Զբոսաշրջության ոլորտի շահառուների (պետական և մասնավոր) և ծառայությունների մատակարարների միջև խթանված |

| Ժամկետ | Հիմնական գործողություն | Նախնական միջոցառում | Մասնակից շահագրգիռ կողմեր | Մոնիթորինգի չափանիշներ |
|---|---|---|---|---|
| | | | | կապեր և համագործակցություն |
| 2026թ. | 4.3. Նպատակակետի տեսանելիությունը բարձրացնելու և պոտենցիալ (ներքին և միջազգային) այցելուներ ներգրավելու նպատակով տարբեր հարթակներում (ներառյալ տպագիր, թվային և սոցիալական) թիրախային խմբերի վրա հիմնված գովազդային արշավների մեկնարկ | | Լոռի DMO, պետական մարմիններ | Զբոսաշրջիկների / այցելուների ավելացված թվաքանակ |
| 2025թ. | 4.4. Ներգրավել ԶԼՄ-ները և ազդեցիկ անձանց (influencer)՝ դրական լուսաբանում ապահովելու համար, այդպիսով բարձրացնել նպատակակետի համբավն ու վստահելիությունը | | Լոռի DMO | Մամուլից հատվածների մեջբերում, օրինակ՝ google alerts-ի միջոցով |
| 2026թ. | 5.1. Անգլերենի հիմնական և խորացված հմտությունների վերաբերյալ հարմարեցված և թիրախային խմբերի վրա հիմնված վերապատրաստման ծրագրեր | | Լոռու մարզպետի աշխատակազմ, Լոռի DMO, տեղական կրթական հաստատություններ, դոնորներ, միջազգային ծրագրեր | Զբոսաշրջության ոլորտի հմուտ ծառայություններ մատակարարողների և շահառուների (պետական և մասնավոր) ավելացված թվաքանակ<br><br>Զբոսաշրջության ոլորտի մատակարարների բարելավված ծառայությունների որակ և կատարողական |

| Ժամկետ | Հիմնական գործողություն | Նախնական միջոցառում | Մասնակից շահագրգիռ կողմեր | Մոնիթորինգի չափանիշներ |
|---|---|---|---|---|
| 2025թ. | 5.2. Զբոսաշրջային ծառայությունների մատակարարներին առցանց ներկայությունն ապահովելու (օրինակ՝ սեփական վեբ կայքի, Tripadvisor-ի, Facebook-ի, Instagram-ի և այլնի ստեղծում) և առցանց վաճառքի հարթակների (օրինակ՝ booking.com, airbnb) օգտագործման աջակցություն | | Լոռու մարզպետի աշխատակազմ, Լոռի DMO, տեղական կրթական հաստատություններ, դոնորներ, միջազգային ծրագրեր | Զբոսաշրջության ոլորտի հմուտ ծառայություններ մատակարարողների և շահառուների (պետական և մասնավոր) ավելացված թվաքանակ<br>Զբոսաշրջիկների / այցելուների ավելացված թվաքանակ |
| 2025թ. | 5.3. Զբոսաշրջության մատակարարների սպասարկման որակի և կայունության կատարողականի բարելավման և նվազագույն չափորոշիչների համապատասխանությունը ապահովելու համար հարմարեցված և թիրախային խմբերի վրա հիմնված վերապատրաստման ծրագրերի տրամադրում | | Լոռու մարզպետի աշխատակազմ, Լոռի DMO, տեղական կրթական հաստատություններ, դոնորներ, միջազգային ծրագրեր | Զբոսաշրջության ոլորտի հմուտ ծառայություններ մատակարարողների և շահառուների (պետական և մասնավոր) ավելացված թվաքանակ<br>Զբոսաշրջության ոլորտի մատակարարների բարելավված ծառայությունների որակ և կայունության կատարողական |

## Երկարաժամկետ գործողությունների կարիք՝ 2027 կամ ավելի ուշ

| Գործողության ոլորտը | Կայուն զբոսաշրջության զարգացման համար հիմնական գործողություն | Ռազմավարական նպատակ |
|---|---|---|
| 1. Նպատակակետի կառավարում | 1.1 Նպատակակետի վրա ազդող անսպասելի իրադարձությունների, բնական աղետների կամ առողջապահական արտակարգ իրավիճակների արձագանքման մեխանիզմների ճգնաժամային պլանների մշակում: | 3, 4, 6 |
| | 1.2. Զբոսաշրջության և ենթակառուցվածքների զարգացման նպատակով այցելուների համար օրահարկի կամ ննջատեղի հարկի ներդրում | 1, 4 |
| 2. Զբոսաշրջության ոլորտի վերլուծություն և վիճակագրություն | 2.1. Զբոսաշրջության առաջարկի և պահանջարկի հիմնական վիճակագրական թվերի և զբոսաշրջության տնտեսական ազդեցության վերաբերյալ սեզոնային/տարեկան հաշվետվությունների մշակում և հրապարակում | 5, 6 |
| 3. Նպատակակետի մարքեթինգ և բրենդինգ | 3.1. Այցելուների տվյալները հավաքագրելու և ավելացված օգուտներ տրամադրելու նպատակով Լոռու մարզի այցելուներին հյուրի քարտի ծրագրի մշակում և գործարկում | 4, 5, 6 |
| | 3.2. Համապատասխան թիրախային շուկաների տարածաշրջանային և միջազգային տուրօպերատորներին Լոռի մարզը փաթեթներում (միջսահմանային/տարածաշրջանային) ներառելու նպատակով ճանաչողական այցերի իրականացում | 5, 6 |
| | 3.3. Զբոսաշրջիկներին գրավելու և նպատակակետի մշակութային հարստությունն ու զվարճանքի առաջարկները լուսաբանելու նպատակով միջոցառման, փառատոնի կազմակերպում կամ հովանավորում | 1, 3, 5, 6 |
| 4. Զբոսաշրջային արդյունքի մշակում և թիրախային խմբեր | 4.1. Հաշմանդամություն և տարբեր կարիքներ ունեցող ճանապարհորդների զբոսաշրջային արդյունքի և փորձառությունների հասանելիության ապահովում | 4 |
| | 4.2. Աջակցություն տեղական շահագրգիռ կողմերին՝ իրենց զբոսաշրջային բիզնեսը հիմնելու համար | 3, 5, 6 |
| | 4.3. Ավելի արագորեն բիզնեսներ հիմնելու և զարգանալու նպատակով զբոսաշրջության ոլորտում ներգրավված երիտասարդների համար աքսելերացիոն ծրագրերի իրականացում | 3, 6 |
| | 4.4. Գաղափարներ ստեղծողների և ներդրողների միջև կապեր ստեղծելու ու ձեռներեցությունը խթանելու նպատակով «գաղափարների բանկի» ստեղծում: | 3, 5, 6 |

## Երկարաժամկետ գործողությունների և մոնիթորինգի պլան

| Ժամկետ | Կայուն զբոսաշրջության զարգացման համար հիմնական գործողություն | Նախնական միջոցառում | Մասնակից շահագրգիռ կողմեր | Մոնիթորինգի չափանիշներ |
|---|---|---|---|---|
| 2026-2027թթ. | 1.1 Նպատակակետի վրա ազդող անսպասելի իրադարձությունների, բնական աղետների կամ առողջապահական արտակարգ իրավիճակների արձագանքման մեխանիզմների ճգնաժամային պլանների մշակում: | Հաշվի առնել առաջնահերթությունները, ինչպես նաև ֆինանսական և կադրային շրջանակային պայմանները: Հիմնական գործունեության մեկնարկում սահմանել առաջնային միջոցառումները | Լոռի DMO, զբոսաշրջության ոլորտի ծառայությունների մատակարարներ, պետական մարմիններ | Գործում են ռիսկերի կանխարգելման և ճգնաժամային կառավարման պատշաճ մեխանիզմներ |
| 2026-2027թթ. | 1.2. Զբոսաշրջության և ենթակառուցվածքների զարգացման նպատակով այցելուների համար օրահարկի կամ ննջատեղի հարկի ներդրում | Հաշվի առնել առաջնահերթությունները, ինչպես նաև ֆինանսական և կադրային շրջանակային պայմանները: Հիմնական գործունեության մեկնարկում սահմանել առաջնային միջոցառումները | Զբոսաշրջության ոլորտի պետական մարմիններ | Եկամտի չափի և դրա օգտագործման թափանցիկ դիտարկման առկայություն |
| 2026-2027թթ. | 2.1. Զբոսաշրջության առաջարկի և պահանջարկի հիմնական վիճակագրական թվերի և զբոսաշրջության տնտեսական ազդեցության վերաբերյալ սեզոնային/տարեկան հաշվետվությունների մշակում և հրապարակում | Հաշվի առնել առաջնահերթությունները, ինչպես նաև ֆինանսական և կադրային շրջանակային պայմանները: Հիմնական գործունեության մեկնարկում սահմանել առաջնային միջոցառումները | Լոռի DMO | Առկա արդյունքների հաշվետվություններ |
| 2026-2027թթ. | 3.1. Այցելուների տվյալները հավաքագրելու և ավելացված օգուտներ տրամադրելու նպատակով Լոռու մարզի այցելուներին հյուրի քարտի ծրագրի մշակում և գործարկում | Հաշվի առնել առաջնահերթությունները, ինչպես նաև ֆինանսական և կադրային շրջանակային պայմանները: Հիմնական գործունեության մեկնարկում սահմանել առաջնային միջոցառումները | Լոռի DMO, ծառայությունների մատակարարներ | Հյուրերի քարտի ծրագրին մասնակից տեղական բիզնեսների քանակ<br>Հյուրերի քարտից օգտվողների քանակ<br>Հյուրերի քարտերի վաճառքից գոյացած եկամուտներ |

| Ժամկետ | Կայուն զբոսաշրջության զարգացման համար հիմնական գործողություն | Նախնական միջոցառում | Մասնակից շահագրգիռ կողմեր | Մոնիթորինգի չափանիշներ |
|---|---|---|---|---|
| | 3.2. Համապատասխան թիրախային շուկաների տարածաշրջանային և միջազգային տուրօպերատորներին Լոռի մարզը փաթեթներում (միջսահմանային/տարածաշրջանային) ներառելու նպատակով ճանաչողական այցերի իրականացում | Հաշվի առնել առաջնահերթությունները, ինչպես նաև ֆինանսական և կադրային շրջանակային պայմանները: Հիմնական գործունեության մեկնարկում սահմանել առաջնային միջոցառումները | Լոռի DMO, զբոսաշրջության ոլորտի ծառայությունների մատակարարներ, պետական մարմիններ | Զբոսաշրջիկների / այցելուների ավելացված թվաքանակ<br>Զբոսաշրջիկների / այցելուների ժամանման տևողության ավելի երկար ժամկետներ |
| | 3.3. Զբոսաշրջիկներին գրավելու և նպատակակետի մշակութային հարստությունն ու զվարճանքի առաջարկները լուսաբանելու նպատակով միջոցառման, փառատոնի կազմակերպում կամ հովանավորում | Հաշվի առնել առաջնահերթությունները, ինչպես նաև ֆինանսական և կադրային շրջանակային պայմանները: Հիմնական գործունեության մեկնարկում սահմանել առաջնային միջոցառումները | Լոռու մարզպետի աշխատակազմ, Լոռի DMO, զբոսաշրջության ոլորտի ՓՄՁ-ներ, պետական մարմիններ | Իրականացված միջոցառում կամ փառատոն |
| 2026-2027թթ. | 4.1. Հաշմանդամություն և տարբեր կարիքներ ունեցող ճանապարհորդների զբոսաշրջային արդյունքի և փորձառությունների հասանելիության ապահովում | Հաշվի առնել առաջնահերթությունները, ինչպես նաև ֆինանսական և կադրային շրջանակային պայմանները: Հիմնական գործունեության մեկնարկում սահմանել առաջնային միջոցառումները | Զբոսաշրջության ոլորտի մատակարարներ | Ենթակառուցվածքը հնարավորինս չափով հարմարեցված է հաշմանդամություն ունեցող մարդկանց կարիքներին |
| 2026-2027թթ. | 4.2. Աջակցություն տեղական շահագրգիռ կողմերին իրենց զբոսաշրջային բիզնեսը հիմնելու համար | Հաշվի առնել առաջնահերթությունները, ինչպես նաև ֆինանսական և կադրային շրջանակային պայմանները: Հիմնական գործունեության մեկնարկում սահմանել առաջնային միջոցառումները | Լոռու մարզպետի աշխատակազմ, Լոռի DMO, ձեռնարկատերեր, պետական շահառուներ | Զբոսաշրջության արժեքային շղթայում ինտեգրված մատակարարների ավելացված քանակ<br><br>Զբոսաշրջության մատակարարների համար աշխատող ավելացված անձնակազմ |

| Ժամկետ | Կայուն զբոսաշրջության զարգացման համար հիմնական գործողություն | Նախնական միջոացառում | Մասնակից շահագրգիռ կողմեր | Մոնիթորինգի չափանիշներ |
|---|---|---|---|---|
| 2026-2027թթ. | 4.3. Ավելի արագորեն բիզնեսներ հիմնելու և զարգանալու նպատակով զբոսաշրջության ոլորտում ներգրավված երիտասարդների համար աքսելերացիոն ծրագերի իրականացում | Հաշվի առնել առաջնահերթությունները, ինչպես նաև ֆինանսական և կադրային շրջանակային պայմանները: Հիմնական գործունեության մեկնարկում սահմանել առաջնային միջոցառումները | Լոռի DMO, ձեռնարկատերեր, պետական շահառուներ, դոնորներ, միջազգային ծրագրեր | Երիտասարդության ներգրավվածության աստիճան<br><br>Աքսելերացիոն ծրագրերում ներգրավված / ավարտած մասնակիցների քանակ |
| 2026-2027թթ. | 4.4. Գաղափարներ ստեղծողների և ներդրողների միջև կապերը ստեղծելու ու ձեռներեցությունը խթանելու նպատակով «գաղափարների բանկի» ստեղծում: | Հաշվի առնել առաջնահերթությունները, ինչպես նաև ֆինանսական և կադրային շրջանակային պայմանները: Հիմնական գործունեության մեկնարկում սահմանել առաջնային միջոցառումները | Լոռու մարզպետի աշխատակազմ, Լոռի DMO, ձեռնարկատերեր, պետական շահառուներ, դոնորներ, միջազգային ծրագրեր | Ներդրողների կողմից ներկայացված և աջակցվող գաղափարների քանակը<br><br>Իրականացված գաղափարների քանակի հետևում<br><br>Հաջողված դեպքերի թիվը |